

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐԸ

### Դավիթ Շովիաննիսյան

Վերջին տարիներին հասարակական եւ քաղաքական տարաբնույթ շրջանակների քննարկման նյութ է դարձել մի շատ կարեւոր հարց՝ արդի ժամանակաշրջանում պետության փոխակերպման խնդիրը:

Գաղափարական պայքարի ոլորտում գոյացած եւ հետզիետե իմացաբանական բնույթ ստացած՝ պետության ձեւի զարգացման հեռանկարների վերաբերյալ բանավեճը սառը պատերազմի ավարտից հետո, բախվելով մի իրավիճակի, որի նմանը պատմությունը դեռեւս չգիտեր (մի գերտերության, այսպես կոչված, «միաբեւեռ» կառավարում), նոր հարցեր առաջացրեց քաղաքակրթական այդ արդյունքի հնարավոր փոխակերպումների վերաբերյալ:

Պետության բնորոշումները բազմաթիվ եւ տարբեր են, սակայն նրա հիմնական եռթյունը բոլոր փիլիսոփայական եւ սոցիոլոգիական դպրոցների կողմից գրեթե նույն կերպ է տրվում. պետությունը քաղաքական համակարգի հիմնական ինստիտուտն է, որն ունի մենատիրական իրավունք՝ ամբողջ բնակչության համար պարտադիր օրենքներ ստեղծելու, այդ օրենքների կատարումը պաշտպանելու, երկրի արտաքին եւ ներքին քաղաքականությունն իրականացնելու, մաքսեր եւ հարկեր հավաքելու եւ այլն, ինչի համար ունի հատուկ մարմիններ, որոնց միջոցով էլ իրականացնում է իր պարտականությունները: Բնորոշում, որը գրեթե ոչինչ չի կարող տալ խնդրո առարկայի առումով:

Աղապտացիոն բարդ խնդիրներ լուծելու համար հազարամյակներ առաջ ստեղծված պետությունը, որպես քաղաքակրթական կառույց, մարդկության մշակույթի զարգացման հետ իմքն էլ ստիպված զարգացել է, փոփոխվել, նույնիսկ՝ իմաստափոխվել:

Անշուշտ, բոլոր ժամանակաշրջաններում էլ գոյություն ունեին նախորդ փուլերից պահպանված պետական կառույցներ, որոնք, սակայն, պետությունների հավերժ պայքարում դատապարտված էին դիրքերի աստիճանական զիջման եւ լավագույն դեպքում՝ խղճուկ գոյության:

Ընդունված է ասել, որ պետությունն ի հայտ եկավ պատմական այս ժամանակահատվածում, երբ տոհմացեղային կարգավորիչներն այլեւս ի վիճակի չեին ապահովելու հասարակականորեն ընդունված արգելքների կամ պատվիրանների պահպանումը համայնքի բոլոր անդամների

կողմից: Միաժամանակ, շնորհիվ նոր հայտնագործությունների՝ հնարավոր դարձավ ավելի մեծ կոլեկտիվներ ապահովել սննդով, հասարակության վերարտադրման համար անհրաժեշտ ինֆորմացիայի քանակով եւ դրա հաղորդման համապատասխան միջոցներով։ Այս նոր իրողությունը հնարավորություն տվեց ընդհանուր տնտեսական համակարգի հիման վրա միավորել թվով ավելի մեծաքանակ եւ արդեն ոչ միայն արյունակցական կապի վրա ստեղծված համայնքներ, որոնց կառավարման եւ վերահսկման համար անհրաժեշտ էին շատ ավելի կատարյալ միջոցներ, քան նրանք, որոնք կանոնակարգում էին տոհմացեղային համայնքների կյանքը։

Արյունակցական կապը փոխարինվում է ընդհանուր աստվածներով, տեղային լեզուները ձեւավորում են ընդհանուր լեզու, ցեղային սովորությային իրավունքը հիմք է դառնում ավելի բարդ իրավական համակարգի ստեղծման համար, որն արդեն կարելի է անվանել պետական։

Նավագնացության, ցանաքային տրանսպորտի եւ կապի միջոցների զարգացման հետեւանքով ավելի ու ավելի ընդլայնվում են մարդկանց եւ հասարակությունների՝ իրարից փոխագոյնվելու, իրար հետ համագործակցելու հնարավորությունները, ինչն առավելապես իրականացվում էր նվաճողական պատերազմների եւ առեւտրի միջոցով։ Այս երկուսն էլ պահանջում են ավելի կատարյալ կառավարման միջոցներ, ինչը նոր խնդիրներ է դնում պետական կառուցվածքի առջեւ։ Պետության համակարգն աստիճանաբար բարդանում է, իսկ պետական կարգավորման ենթակա խնդիրները՝ ավելանում եւ ավելի բազմատեսակ են դառնում։

Պետության հզորացման եւ նրա վարչական համակարգի բարդանալու գործընթացները զուգահեռ են նվաճանում, սակայն տարբեր արագությամբ։ Յզորացումը մորում է էքսանսիայի, որի արտահայտնան ձեւերի տարբերությունը չի փոխում նպատակի բովանդակությունը՝ հսկել տվյալ դարաշրջանի համար էական ավելի շատ նյութական պաշարներ։ Սակայն «իմ աստվածն է ճշմարիտը» կարգախոսը, որ արժեքային համակարգի էքսպանսիայի մասին է վկայում, գուցե եւ ավելի է կարեւորվում, քան նյութական պաշարներին տիրանալու գաղափարը։

Կառավարման համակարգը սովորաբար չի հասցնում էքսպանսիայի արագության հետեւից, ինչի հիմքում տարբեր պատճառներ կարող են ընկած լինել, սակայն հիմնականը՝ մարդու իներցիոն մտածողության անհաղթահարելի ուժն է, որը ստիպում է նրան դիմադրել նոր իրողությանը եւ փոփոխված արժեքներին։ Այդ պահից սկսվում է պետության թուլացումը, իսկ կայսրությունների դեպքում՝ քայլայումը եւ անկումը։

Դրա վառ օրինակն են քաղաք-պետությունները. ուժեղանալով եւ

ընդլայնվելով՝ դրանք դուրս են եկել իրենց իրական հնարավորությունների սահմաններից, սակայն կուտակել են հսկայական հարստություն, որի համար պայքարն արդեն վարել են, Ֆ.Բրոդելի արտահայտությամբ, «տարածքային պետությունները»<sup>1</sup>, իսկ հիմնականում՝ կայսրությունները:

Քաղաք-պետությունների հերթական նահանջը, այս անգամ՝ Ապենինյան թերակղզում, ստիպում է դարաշրջանի մտածողներին՝ Մաքիավելուն, Գվիշարդինին եւ այլոց, հիմնավորել պետության՝ որպես կուռ միասնության, որի ճակատագիրն անբաժան է իր բնակչության համար ճակատագրից<sup>2</sup>, զարգացման հիմնադրույթը, ինչը հատուկ պատասխանատվություն է դնում կառավարողի վրա, եւ վերջինս պետք է ձգտի բոլոր միջոցներով հասնել դրան: Եվ այստեղ ծնվում է մի ձեւակերպում, որը, սկսած այդ ժամանակաշրջանից, հիմնավորում է պետական այրերի բոլոր գործողությունները՝ *ragione di stato* (*իտալ.*՝ պետական շահ): Ձեւակերպման հեղինակի՝ կարդինալ Ջովանի Ռելա Կազայի անունը վաղուց մոռացվել է, այն ավելի շատ կապվում է մեկ այլ կարդինալի՝ ֆրանսիայի մեծ ճարտարապետ Ռիշելիեի անվան հետ, որը *raison d'état* (*ragione di stato*-ի ֆրանս. *հոմանիշը*) սկզբունքը դարձնելով բացարձակ՝ իրաժարվեց քաղաքականության կրոնական սկզբունքից եւ դաշինքի մեջ մտավ բոլորքական գերմանական իշխանների հետ՝ ընդդեմ կաթոլիկ Հարսբուրգ-ների կայսրության:

Ֆրանսիական հեղափոխությունը, անվանելով նախկին հպատակներին քաղաքացի, փոխեց պետության հիմքում ընկած հիմնարար արժեքը՝ դրանով իսկ սկիզբ դնելով ազգ-պետությանը:

Ազգ-պետությունների ստեղծման հետ միասին առաջանում է ներկայիս իմաստով միջանական հարաբերությունների համակարգը: Այդ պահից, որը եվրոպակենտրոն պատմության մեջ ավանդաբար կապում են Վեստֆալյան համակարգի ստեղծման հետ, ստեղծվում է մի իրավիճակ, որն, ըստ Յենրի Ֆիսինջերի, բնորոշվում է հետեւյալ կերպ. «Անմիջապես, երբ միջազգային համակարգի բաղադրյալները փոխում են իրենց բնույթը, անխուսափելիորեն հետեւում է ցնցումների ժամանակաշրջան:

<sup>1</sup> Ֆ.Բրոդելն օգտագործում է այս եզրը «ազգային» եզրից խուսափելու համար, քանի որ 15-16-րդ դարերում դեռ ազգ-պետություններ չկային:

<sup>2</sup> Մինչ այդ քաջավորի կամ իշխանի պարտությունը նշանակում էր միայն այդ հարստության (դինաստիայի) բուլացում կամ կործանում, իսկ հպատակների խնդիրն էական չէր:

Երեսնամյա պատերազմը զգալի չափով վարվում էր ավանդության եւ ունիվերսալության հավակնությունների վրա հիմնվող ֆեոդալական հասարակություններից *raison d'état*-ի վրա հիմնվող ժամանակակից պետական համակարգին անցում կատարելու հետեւանքով: Ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանի պատերազմները դեպի ընդհանուր լեզվով եւ մշակույթով բնորոշվող ազգ-պետություններ անցման նշանաբանն էին... Այս անցումային շրջաններից յուրաքանչյուրում այն, ինչն ընկալվում էր որպես ինքնըստինքյան ենթադրվող, հանկարծ դաշնում էր անաքրոնիզմ»:

Սառը պատերազմի ավարտից հետո միջազգային համակարգի բաղադրյալները կտրուկ փոխվեցին, ինչը նշանակում է, որ պետականության ձեւը նույնական պետք է փոփոխություններ կրեր: Ազգ-պետությունների դարաշրջանի ավարտի մասին խոսող գիտնականները եւ քաղաքական գործիչները հիմնվում են այն իրողության վրա, որ գլոբալ դեր ներկայիս համաշխարհային համակարգում կարող են կատարել միայն պետությունների դաշինքները, որոնք, միավորելով իրենց ռեսուրսները, կարող են առաջարկել մրցունակ գլոբալիզացիոն նախագծեր<sup>3</sup>:

Յարկ է նշել, որ նման ծրագրերն իրականացնողների համար Հելսինկյան պատվիրանները պարտադիր չեն, քանի որ նրանք առաջնորդվում են այլ արժեքներով, որոնք պարադոքսալ կերպով համընկնում են իին եւ հասկանալի *raison d'état*-ի հետ, քանի որ այդ միավորումների մեջ մտնող ազգ-պետություններն այդ միջոցով փորձում են ընդլայնել իրենց պետական շահերի իրացման կետերի շրջանակը: Սակայն այստեղ կա մի ծուղակ, որի մեջ ժամանակին ընկնում էին քաղաք-պետությունները. նրանց առանձին եւ յուրահատուկ շահերն ինտեգրվում էին ընդհանուրի մեջ՝ վերջնական տեսքում ստանալով բոլորովին այլ արտահայտություն: Յավանաբար, այդ վտանգը զգաց Ֆրանսիայի եւ Յոլանդիայի բնակչությունը վերջին հանրաքվեների նախօրյակին: Յավանաբար, այդ զգացումը շատ ավելի սուր է դարերով «փայլում մեկուսացման» քաղաքականություն վարած կղզիաբնակ բրիտանացիների համար:

---

<sup>3</sup> Այս կապակցությամբ տեղին է մեջ բերել Ֆ.Բրոդելի 15-րդ դ. մասին գրած տողերը. «Միայն քաղաք-պետության հետ մրցակցող տարածքային պետությունը, օգտագործելով իր տարածությունը եւ մարդկային ռեսուրսները, ի վիճակի է դիմանալ նոր եվրոպական պատերազմի վարման համար պահանջվող ծախսերին. այն գնում է վարձկանների բանակներ, ապահովում է իրեն հրետանիով եւ նույնիսկ կարող է իրեն թույլ տալ ծովային լայնածավալ ռազմական գործողությունների շքեղություն»:

Կոնֆուցիական Չինաստանի գլոբալիզացիոն նախագիծը՝ քաղաքակրթության համակարգը տարածել բարբարոսների աշխարհում, իրականացվում է հազարամյակներով ստուգված արժեքային համակարգի, մարդկային գանգվածի եւ մշակույթը քաղաքակրթության վերածելու ֆանտաստիկ ունակության շնորհիվ: Չայնաթառունները չեն դառնում ամերիկյան կամ եվրոպական, նրանք «չինացնում» են ամերիկյան, եվրոպական եւ այլ քաղաքների մի փոքր մասը, ինչը բավական է չինական գլոբալիզացիոն նախագծի հաջողության համար, որը հիմնված է սեփական երթյան նորովի արժեւորման սկզբունքի վրա:

Այն ազգ-պետությունները, որոնք ընդգրկված չեն գլոբալիզացիոն նախագծերից եւ ոչ մեկում, ստիպված են սեղմել իրենց ազգային-պետական շահերի կիրառման կետերի շրջանակները, սահմանափակել նպատակները, քանի որ չունենալով անհրաժեշտ ներուժ սեփական գլոբալիզացիոն ծրագիր կազմելու համար՝ ենթարկվում են տվյալ պահին իրենց վրա ավելի մեծ ազդեցություն ունեցող նախագծի պահանջներին՝ ստիպված լինելով զիջել պետական ինքնիշխանության էական հատվածներ եւ անցնելով ինչ-որ չափով տեղական ինքնակառավարման հրականացման նակարդակի:

Նման իրավիճակից հնարավոր են հետեւյալ ելքերը.

ա) սեփական նախագծի ստեղծում եւ վերջինիս ադապտացում արդեն գոյություն ունեցող նախագծերից մեկի հետ (այս տարբերակը կարելի է անվանել համագործակցություն),

բ) ադապտացում առանց սեփական նախագծի (այն կարելի է բնորոշել՝ ուրիշի կողմից օգտագործում),

գ) ադապտացումից գիտակցարար հրաժարում, ինչը, որպես կանոն, արդյունք չի տալիս, բայց ստեղծում է վլանգավոր պատրանքներ (կղզիացում):

Յուրաքանչյուր ազգ գիտակցարար (կամ, երբեմն, ակամա) ընդունում է այս ելքերից որեւէ մեկը: Թերեւս, մեզ համար ներկայումս ուրվագծվող ընդունելի ելքը՝ սեփական նախագծով գլոբալ նախագծերին ադապտացումն է, ինչը, սակայն, չի բացառում ժամանակի հրամայականով նոր նախագծերին գիտակցարար ադապտացվելու հնարավորությունը:

## **ԱԴՐԲԵԶԱՆԸ ՊԵՆՏԱԳՈՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐՈՒՄ Սարգիս Յարությունյան**

### **ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ ԻԱՆԱԼԱՐԳԻ ՃԵԼԱՎԻԽՈՒՄԸ**

Այսօր Միացյալ Նահանգները միակն է, որ փորձում է իրականացնել անվտանգության իամակարգի համաշխարհային մոդելավորում եւ գտնվում է այդ նպատակին միտված սեփական անվտանգության համակարգի նախակինում մեծ կարեւորություն ունեցող բազմաբնույթ տարրերի ճելավիխուման ակտիվ փուլում: Մնացած թոլոր ուժի կենտրոնների պարագայում անվտանգության իամակարգերն ունեն աշխարհագրական սահմանափակվածություն:

Յարցին առնչվող Վաշինգտոնի պատկերացումներն, ընդհանուր առմանք, ճելավորվել էին դեռեւս սառը պատերազմի ավարտին՝ 1980-ական թթ. Վերջ – 1990-ական թթ. սկիզբ՝ Զորջ Բուշ-ավագի վարչակազմում: Ըստ ամերիկյան ԶԼՍ-ի՝ դեռեւս 1992թ. ԱՄՆ այն ժամանակվա պաշտպանության նախարար Դիկ Չեյնի հանձնարարությամբ պատրաստվել էր մի գեկույց, որի համաձայն՝ աշխարհում հզորության տեսանկյունից ԱՄՆ-ին մարտահրավեր նետող ուժի ի հայտ գալը թույլ չտալու համար Վաշինգտոնը պետք է դիմի ռազմական կանխարգելիչ գործողությունների՝ անհրաժեշտության դեպքում հաշվի չառնելով դաշնակիցների կարծիքը:

Բավական ընդհանուր գծերով այդ դրույթները պահպանվեցին նաեւ Բիլ Քլինթոնի նախագահության տարիներին, սակայն իրենց փաստացի արտացոլումը գտան արդեն Զորջ Բուշ-կրտսերի վարչակազմի փաստաթղթերում:

2002թ. սեպտեմբերին հրապարակված «Միացյալ Նահանգների ազգային անվտանգության ռազմավարության» («Բուշի դոկտրինա») մեջ որպես Վաշինգտոնի արտաքին քաղաքական հիմնադրությներ ներկայացված էին ԱՄՆ ռազմական կարողությունների մակարդակն աշխարհի մյուս երկրների համար անհասանելի վիճակում պահելը, կանխարգելիչ հարվածներ հասցնելը եւ անհրաժեշտության դեպքում միայնակ գործելը: Աչքի է զարնում այն հանգամանքը, որ արտաքին

քաղաքականության ռազմավարության բոլոր երեք կետերն էլ, առաջին հերթին, վերաբերում էին Պենտագոնին: Դետեւաբար, ԱՄՆ ազգային անվտանգության գործող ռազմավարության պայմաններում այդ կառույցին հանձնարարվեց առաջնորդողի գործառույթը:

Այդ տեսանկյունից ամենեւին էլ պատահական չէր ամերիկյան պաշտպանության նախարարության ֆինանսավորման գործե 80%-ամոց ածը, որը տեղի ունեցավ 1997-2004թ. ֆինանսական տարիների ընթացքում՝ մոտ \$250 միլիարդից անցնելով \$470 միլիարդ սահմանագիծը:

2004թ. վերջին Պենտագոնի USJFCOM ստորաբաժաննան կողմից հրապարակվեց «Ռազմավարական ծրագրավորման ղեկավարման ձեռնարկ» փաստաթուղթը, ուր բնութագրված էին ԱՄՆ-ին մարտահրավեր նետող առկա եւ հավանական սպառնալիքները: Փաստաթուղթի հեղինակներն ամենից վտանգավոր համարել էին «անկանոն» սպառնալիքները, որոնց դեմ պայքարի հարցում կարեւորվել էր ամերիկյան ռազմուժի կառուցվածքային եւ գործառնական որոշակի ձեւափոխման անհրաժեշտությունը: Ավելի կոնկրետ՝ ամերիկյան պաշտպանական գերատեսչության կողմից սկսեց հրապարակ նետվել «շարժուն գորամիավորումների» գաղափարը, որոնք պետք է ամերիկյան ռազմուժը դարձնեին ավելի ճկուն՝ նրա առաջավոր ստորաբաժանները տեղափոխելով հավանական վտանգի օջախներին հնարավորինս մոտ:

Ներկայումս ամերիկյան ազգային հակահրթիռային պաշտպանության համակարգի ստեղծման աշխատանքների հետ միաժամանակ՝ որպես անվտանգության ապահովման առաջնային միջոցառում է դիտարկվում ԱՄՆ պաշտպանական գերատեսչության ենթակայության ներքո գտնվող կառույցների գլոբալ ձեւափոխումը՝ ցամաքուն («շարժուն գորամիավորումներ»), ջրում (նավատորմի հզրության մեծացում եւ առանց նավահանգիստներ մուտք գործելու գրեթե մշտական գործունեություն) եւ օդում (նոր սերնդի ռազմական ինքնաթիռների՝ F-22 Raptor, F-35 եւ այլ թռչող սարքերի ձեռքբերում):

### **Աղրբեջանական հանգրվան**

Թեեւ ներկայումս Հարավային Կովկասում ամերիկյան ռազմաքաղաքական թիվ մեկ գործընկեր դառնալու հավակնություններ ունի Վրաստանը, սակայն գործնականում ԱՄՆ-ի համար ավելի կարեւոր է Աղրբեջանը: Աշխարհագրական եւ էներգակիրների պաշարների պատճառով Աղրբեջանը ամերիկյան ստրատեգների կարծիքով հանգուցային կետ է:

Աղրբեջանում ամերիկյան «շարժուն գորամիավորումների» տեղա-

կայման գործընթացի սկիզբ պետք է համարել 2001թ. դեկտեմբերը, երբ ԱՄՆ պաշտպանության նախարար Ռամսֆելդը կատարեց իր առաջին այցը Բաքու: Հետագայում գերազանցապես ամերիկյան մամուլում պարբերաբար «արտահոսքեր» էին կազմակերպվում, թե Եվրոպայում տեղակայված ամերիկյան զորամիավորների մի մասը կարող է հայտնվել նաեւ Աղրբեջանում: 2003թ. հունիսին ամերիկյան «The Wall Street Journal»-ը գրեց, թե Գերմանիայում տեղակայված ԱՄՆ 70 հազարանոց զորամիավորնան, ինչպես նաեւ Սաուդյան Արաբիայում, Թուրքիայում, անգամ Մեծ Բրիտանիայում առկա զորախմբերի մի մասը պետք է տեղափոխվեն Աֆրիկա եւ Կովկաս՝ նավթի կարեւորագույն պաշտպաների նկատմամբ վերահսկողություն սահմանելու համար: Կոնկրետ երկրներից նշված էին Սիգերիայի եւ Աղրբեջանի անունները (ըստ այդ տեղեկության՝ 15 հազարանոց մի զորախումբ գերազանցապես Ռումինիայի եւ Բուլղարիայի նավահանգիստներով պետք է տեղափոխվեր Աղրբեջան):

Որոշ տեղեկությունների համաձայն՝ 2003թ. դեկտեմբերին Բաքու ԱՄՆ պաշտպանության նախարարի երկրորդ այցից հետո նույն ամսվա առաջին տասնօրյակում Ադրբեյջանում էին ամերիկյան ռազմական մասնագետներ, որոնք զբաղված էին երկրի օդանավակայանների (ռազմական եւ քաղաքացիական) տեխնիկական կարողությունների ուսումնասիրությամբ: Զննվել էին Բաքվի «Բինա» եւ Գյանջայի օդանավակայանները, ինչպես նաև Քյուրդամիր, Նախիջևանի, Գալա եւ Սիտալչայ բնակավայրերի մոտ տեղակայված ռազմական օդանավակայանները:

Ըստ ադրբեջանական ԶԼՄ-ի հաղորդագրությունների՝ արդեն 2005թ. դրությամբ ամերիկյան մասնագետներն իրենց հիմնական ուժերը կենտրոնացրել են Թյուրությամիրի օդանավակայանի ուղղությամբ, որը, նույն հրապարակումների համաձայն, հետագայում պետք է դառնա ամերիկյան օդուժի հենակետ:

Այսօր ամերիկա-ադրբեջանական ռազմական համագործակցությունը, 2001-ից ի վեր Ադրբեջանին Վաշինգտոնի կողմից հատկացվող ամենամյա օգնության շրջանակներում՝ հիմնականում կենտրոնացել է \$135 մլն արժողությամբ «Կասպյան պահապաններ» ծրագրի վրա, որի հիմնական նպատակն է Ադրբեջան-Կասպից ծով-Կենտրոնական Ասիա հատվածում վերահսկողական համակարգերի ստեղծումը:

2005թ. պաշտոնապես հայտնի դարձավ Աղրբեջանի հարավային՝ Աստարայի եւ հյուսիսային՝ Խզզինյան շրջաններում ամերիկյան AN/FPS117 տեսակի ռադարների տեղակայման մասին, որոնք ռուսական, կասպյան եւ իրանական ուղղություններով կարող են նոնիթորինգի

Ենթարկել մոտ 450կմ շառավղով տարածք: Ի հավելումն՝ 2006թ. առաջին օրերին պարզ դարձավ, որ ամերիկյան մասնագետների շնորհիվ արդիականացվելու են Աղստաֆայում եւ Լերիկում գտնվող աղբեջանական բանակի ռադիոտեղորոշիչ երկու կայաններ:

### **Ընդհանրացում**

Ըստ ամենայնի, Աղբեջանում ամերիկյան ռազմական ներկայության հաստատումն ընթանալու է աստիճանական եղանակով՝ վերահսկողական համակարգերի ստեղծումից մինչեւ հակաօդային պաշտպանություն եւ հետո արդեն՝ օդուժի տեղակայում ու «շարժուն զրոամիավորումներ»:

Որոշ տեղեկությունների համաձայն, մինչեւ 2015թ. ԱՄՆ ռազմուժի եվրոպական իրամանատարությունը նպատակ ունի ավարտին հասցնել օդային եւ ջրային տարածությունների մոնիթորինգի եւ տվյալների փոխանակման «CaucasusNet» համակարգի ձեւավորման աշխատանքները: Դամակարգի բաղկացուցիչ մասն են կազմելու տարածաշրջանում գործող ռադիոտեղորոշիչ կայանները, որոնք գերազանցապես ուղղված են լինելու Ռուսաստանի եւ Իրանի դեմ՝ մաս կազմելով ամերիկյան ազգային հակահրթիռային պաշտպանության գլոբալ համակարգին՝ որպես պաշտպանության առաջին գծի տարրեր:

## **ԻՐԱԾ. ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՉ ՍԵՒԱԿ Սարուխանյան**

2006թ. հունվարի 9-ին, ինչպես եւ բազմիցս սպառնացել էին իրանական դեկավարները, վերսկսվեցին աշխատանքները Սպահանի միջուկային հետազոտությունների կենտրոնում, իսկ հունվարի 10-ին՝ Նաբանգի ուրանի հարստացման գործարանում: Թեհրանի այս քայլերը մատնանշում են որոշակի լարվածության առաջացում իրանի միջուկային ծրագրի շուրջ, որը կպահպանվի առնվազն մինչեւ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԵՄԳ) Կառավարիչների խորհրդի առաջիկա՝ հավանաբար արտահերթ նիստը:

Սպահանի եւ Նաբանգի միջուկային կենտրոնների աշխատանքները, ավելի ճիշտ՝ դրանց հիմնական մասը, դադարեցվել էին համաձայն 2004 թվականի աշնանը Իրանի եւ «ԵՎրոպական Եռյակի»՝ ի դեմս Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի, միջեւ կնքված համաձայնագրի: Վերջինս ենթադրում էր որոշակի ընդմիջում Իրանի միջուկային հետազոտություններում, որի ընթացքում Իրանն ու ԵՄ-ը կկարողանային մշակել Իրանի խաղաղ նշանակության միջուկային ծրագրի զարգացման հիմնական ուղղությունները՝ դրանցից դուրս թողնելով այն հետազոտությունները, որոնք կարող են ունենալ ռազմական նշանակություն: Միեւնույն ժամանակ, ԵՄ-ը պարտավորվում էր տրամադրել Իրանին առեւտրատնտեսական համագործակցության հաստատման առաջարկության մեջ փաթեթ, որը կփոխի հատուցեր Իրանի միջուկային որոշ օբյեկտների աշխատանքների կասեցման հետեւանքները:

Յարկ է նշել, որ չնայած իրանցիների դժգոհությանը ԵՎրոպական առաջարկությունների անկատարությունից, ԵՄ-ը Իրանին, տնտեսական եւ տեխնոլոգիական տեսակետից, ներկայացրել է առաջարկություններ, որոնց մասին Իրանն, ասենք, 5 տարի առաջ անգամ մտածել չեր կարող: Օրինակ՝ ԵՄ երկրները պատրաստակամություն են հայտնել մասնակցել Իրանում միջուկային ռեակտորների կառուցմանը, երաշխավորել միջուկային վառելիքի մատակարարությունը կառուցվելիք միջուկային ռեակտորների համար, զարգացնել միջուկային տեխնոլոգիաների այն բոլոր ուղղությունները, որոնք կարող են ունենալ խաղաղ կիրառման նշանակություն:

1980-1990-ականներին նման համագործակցության առաջարկներով հենց Իրանը բազմիցս դիմել է Եվրոպական Երկրներին, սակայն վերջիններս, հիմնականում ԱՄ ճնշման տակ, իրաժարվել են Իրանի հետ համագործակցելու ծրագրերից: Սակայն այսօր ԱՄ-ը ԵՄ-ի վրա չի կարող այնպիսի ճնշում գործադրել, ինչպես 5 կամ 10 տարի առաջ: Սա պայմանավորված է հիմնականում իրաքյան ճգնաժամով, որը ցույց տվեց, որ ԱՄ եւ ԵՄ անդամներ Ֆրանսիան եւ Գերմանիան ունեն տարբեր մոտեցումներ Սերձավոր Արեւելքի քաղաքական եւ էներգետիկ հեռանկարների վերաբերյալ: Այս համատեքստում Եվրոպացիները սկսեցին Իրանում ավելի համարձակ գործել:

Իրաքյան պատերազմի եւ ճգնաժամի համատեքստում փոխվել է նաև Իրանի տարածաշրջանային դրույթունը: Իրանը ստացել է ավելի մորիլ եւ ինքնավստահ տարածաշրջանային քաղաքականություն վարելու հնարավորություն: Իսկ 2004-ին, երբ սկսվեցին Իրան-ԵՄ բանակցությունները, Իրանը բավականին հեշտ նստեց բանակցությունների սեղանին, քանի որ դեռ ակնհայտ չէր, որ ԱՄ բարդ իրավիճակը Իրաքում ավելի կխորանա: Այս համատեքստում Իրանի միջուկային ծրագրի փակ հատվածի հայտնաբերումը կարող էր հանգեցնել Իրանի դեմ ԱՄ ռազմական գործողության իրականացման, որի հնարավորության մասին 2003/2004 թվականներին խոսվում էր ավելի շատ, քան իմաս, երբ Իրանի միջուկային ծրագրի շուրջ ստեղծված ճգնաժամը կարծես թե հասել է իր բարձրակետին:

Ինչեւէ, բավական բարդ ներքաղաքական եւ արտաքին քաղաքական իրադրությունում Իրանը վերսկսեց իր միջուկային հետազոտությունները ուրանի հարստացման ոլորտում: Այս փաստը, բնականորեն, առաջ բերեց միջազգային հանրության անհանգստությունը, այդ թվում՝ Ռուսաստանի եւ Չինաստանի, որոնք մինչեւ օրս հանդիսացել են Իրանի միջուկային իրավունքների հիմնական պաշտպանները միջազգային բանակցություններում եւ կառույցներում:

Հունվարի 12-ին Բեռլինում տեղի ունեցավ «Եվրոպական Երյակի» արտաքին գործերի նախարարների խորհրդակցությունը՝ նվիրված Իրանի միջուկային ծրագրի շուրջ իրավիճակի զարգացմանը: Բանակցությունների ավարտից հետո նախարարները լրագրողներին ներկայացրին իրենց որոշումը՝ ԱԵՄԳ Կառավարիչների խորհրդի առաջիկա նիստում բարձրացնել Իրանի միջուկային ծրագիրը ՄԱԿ Անվտանգության խորհրդին փոխանցելու հարցը:

Միեւնույն ժամանակ, նույն օրը արդեն ՄԱԿ գլխավոր քարտուղար Ք.Անանը հանդես եկավ հայտարարությամբ այն մասին, որ Իրանը պատրաստ է բանակցությունների շարունակմանը «Եվրոպական Երյակի»

հետ: Այս հայտարարությունը ք.Անանն արեց Իրանի Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Ա.Լարիջանիի հետ տեղի ունեցած հեռախոսագրությունիցից հետո: Յատկանշական է, որ Անանը գտնում է, թե այս պահին նախընտրելի է Իրանի հարցի լուծումը գտնել ԱԵՄԳ Կառավարիչների խորհրդում եւ միայն ծայրահեղ դեպքում դիմել ՍԱԿ Անվտանգության խորհուրդ:

Չնայած Եվրոպացիների կայացրած որոշմանը, այսօր պարզ չէ, թե ինչ իրավական իհմք պետք է ընտրվի ՍԱԿ Ախ կողմից Իրանի գործողությունները դատապարտելու համար: Վերաբացելով իր միջուկային հարստացման գործարանները՝ Իրանն իրավական տեսակետից ոչ մի կերպ չի խախտում Միջուկային գենքի չտարածման մասին պայմանագիրը, որով բոլոր երկրներին տրամադրվում է իրավունք՝ զարգացնել իրենց միջուկային խաղաղ ծրագրերը, որոնց բաղկացուցիչ մաս կարող են կազմել թե՛ ուրանի արդյունահանումը, թե՛ դրա հարստացումը:

Այսօր չկա ոչ մի իրավական փաստաթուղթ, որը հնարավորություն կտա ՍԱԿ Ախ-ին սահմանափակել Իրանի միջուկային հետազոտությունները: Իրանի միջուկային իրավունքները «հարգում» է նաև «Եվրոպական Եռյակը», որը նույնականացնելու համար մեջ Իրանի նկատմամբ մեղադրանքները սահմանեց ոչ թե իրավական, այլ քաղաքական եւ ինչ-որ տեղ բարոյական եզրերով:

Յաշվի առնելով այն փաստը, որ ըստ Ք.Անանի՝ Իրանը պատրաստականություն է հայտնել վերսկսել բանակցությունները «Եվրոպական Եռյակի» հետ, սակայն պայմանով, որ դրանք շուտ ավարտվեն, առաջիկա անխների համար, մեր կարծիքով, հնարավոր են զարգացման մի քանի սցենարներ.

1. **ԱԵՄԳ Կառավարիչների խորհուրդը դատապարտում է Իրանի քաղաքականությունը միջուկային ոլորտում, սակայն, հաշվի առնելով իրանցիների պատրաստականությունը՝ շարունակել քննարկումները, ժամանակ է տրամադրում բանակցությունները վերսկսելու եւ ավարտելու համար: Բանակցությունների հաջող ավարտը կարող է ենթադրել.**

ա) Իրանում ուրանի հարստացման աշխատանքների կասեցում եւ համապատասխան համաձայնագրի ստորագրում, Ռուսաստանի տարածքում ուրանի հարստացման ռուս-իրանական համատեղ ձեռնարկության ստեղծում,

բ) Իրան – ԵՄ առեւտրատնտեսական, քաղաքական եւ տեխնոլոգիական համագործակցության մասին համաձայնագրի ստորագրում, որի արդյունքը կլինի առեւտրատնտեսական հարաբերությունների հաստատումը Իրանի եւ ԵՄ միջեւ ու Եվրոպացիների կողմից Իրանի խաղաղ միջուկային ծրագրի զարգացմանն ակտիվ մասնակցությունը:

2. ԱԵՄԳ Կառավարիչների խորհուրդը դատապարտում է Իրանի միջուկային ծրագիրը եւ իրանական «դոսյեն» տեղափոխում է քննարկման ՄԱԿ Անվտանգության խորհուրդը: Այստեղ ամենաբարդ խնդիրը կլինի Իրանի դեմ պատժամիջոցները կիրառելու խնդիրը, քանզի Իրանի՝ Միջուկային գենքի չտարածման պայմանագրի չխախտման պարագայում պատժամիջոցների կիրառման իրավական հիմքը կլինի անկատար:

Մյուս կարեւոր խնդիրն է, թե ինչ պատժամիջոցներ կարող են կիրառվել Իրանի դեմ, որպեսզի վերջինս ստիպված լինի ընդունել միջազգային հանրության պահանջներն իր միջուկային հետազոտությունները սահմանափակելու վերաբերյալ: Պատժամիջոցները, որ, թերեւս, կարող են ազդել Իրանի պահվածքի վրա, հավանաբար կվերաբերեն նավթային սեկոորդին: Սակայն դրանց կիրառումը կարող է հավասարապես բացասական ազդեցություն ունենալ թե՛ Իրանի եւ թե՛ համաշխարհային տնտեսության վրա: Այս պատժամիջոցները կվճարեն, առաջին հերթին, Զինաստանին, որը մեծ քանակությամբ իրանական նավք է ներկրում եւ, որքան էլ տարօրինակ թվա՝ ԱՍՍ Էներգետիկ անվտանգությանը, որը նույնպես Դուբայի իր միջնորդ ընկերությունների միջոցով ձեռք է բերում մեծ քանակությամբ իրանական նավք: Կա մեծ հավանականություն, որ ՄԱԿ ԱԽ-ը կարգելի ՄԱԿ անդամ Երկրներին համագործակցել Իրանի հետ բարձր տեխնոլոգիաների բնագավառում, որոշակի սահմանափակումներ կմտցնի Իրանի հետ առեւտրական համագործակցության ոլորտում: Սակայն այս կարգի սահմանափակումներ մտցնելը շատ փոքր ազդեցություն կունենա Իրանի միջուկային ծրագրի ռազմական մասի հետագա զարգացման վրա, քանի որ այդ մասը, ներառյալ նաև ուրանի հարստացման աշխատանքները, Իրանի կողմից կատարվում են ինքնուրույն, առանց օտար պետությունների հետ համագործակցության: Յարստացման ողջ ցիկլի տեխնոլոգիաները Իրանի կողմից վաղուց արդեն գնվել են Պակիստանի միջուկային ռումբի «հայր» Աբդուլ Քադիր Խանից եւ նրա յուրայիններից: Իրանի առեւտրատնտեսական բոյկոտի ռեժիմը դժվար թե անհետեւանք անցնի տարածաշրջանային պետությունների համար, որոնցից շատերն Իրանի հետ առեւտրատնտեսական կարեւոր համագործակցություն են հաստատել:

3. ՄԱԿ ԱԽ-ը դատապարտում է Իրանի միջուկային ծրագրի ոչ թափանցիկ լինելը, սակայն ոչ մի պատժամիջոց չի մտցնում Իրանի դեմ: Դրա փոխարեն ստեղծվում է ՄԱԿ Յատուկ հանձնաժողովի տիպի մի ժամանակավոր կառույց, որը եւ ստանձնում է Իրանի հետ բանակցությունների նոր փուլի սկսումը: Այս կառույցի գործունեության արդյունավետությունը կախված կլինի նրանից, թե առաջարկությունների ինչ փաթեթ այն կներկայացնի քննարկման՝ ճգնաժամի խաղաղ եւ պայմա-

նականորեն ասած՝ վերջնական կարգավորման համար: Հարցի լուծման համար հարկավոր է, որ այս նոր փաթեթում՝ ի լրումն ԵՄ առաջարկած առեւտրատնտեսական եւ տեխնոլոգիական համագործակցության, ուրանի հարստացման ռուս-իրանական համատեղ ձեռնարկության ստեղծման Ռուսաստանի առաջարկության, ՍԱԿ անունից Իրանին ներկայացվեն քաղաքական բնույթի առաջարկներ: Կոպիտ ասած՝ ՍԱԿ ԱԽ անդամների կողմից Իրանին պետք է տրամադրվեն անվտանգության երաշխիքներ:

ՍԱԿ կողմից նման երաշխիքների տրամադրումն անուղղակիորեն պետք է ենթադրի նույնը ԱՄՆ կողմից: Սակայն ԱՄՆ-ը նման երաշխիքների տրամադրումը կապում է ոչ միայն Իրանի միջուկային հիմնախնդրի լուծման, այլ նաև մարդու իրավունքների եւ ահաբեկչության հիմնախնդիրների հետ: Այս տեսանկյունից ԱՄՆ երաշխիքների խնդրի շուրջ մոտեցման փոփոխությունը կախված կարող է լինել միայն իրավիճակի անելանելիությունից: Սակայն ԱՄՆ-ը դեռևս Իրանի հարցի այլընտրանքային, այդ թվում եւ ռազմական լուծման սցենարներից չի իրաժարվել:

Վերը ներկայացված սցենարները չեն սահմանափակում իրադրության զարգացման հնարավոր ուղիները: Միաժամանակ, պետք է նշել, որ այս պահին Իրանի միջուկային ճգնաժամի կարգավորումը հասել է իր դիվանագիտական բարձրակետին, որից բխում են հիմնախնդրի լուծման երկու ուղղություն, այն է՝ խաղաղ կարգավորում կամ ռազմական ուժի գործադրում՝ անկանխատեսելի հետեւանքներով:

**ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱԶ.  
ՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
Գագիկ Տեր-Ճարությունյան**

2005-ի վերջի ամենաուշագրավ իրադարձություններից էր Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ գազի սակագների շուրջ ծագած վեճը: Կասկած չի հարուցում, որ սլավոնական այդ երկու հանրապետությունների հակամարտությունը, չնայած թվացյալ հանգուցալուժմանը, դեռ նոր զարգացումներ է ապրելու. մասնավորապես, որա մասին է Վկայում Բարձրագույն Ռադայի՝ կառավարությունը պաշտոնանկ անելու որոշումը, ինչն իրավաբանական խառնաշփոթ առաջարեց խորհրդարանական ընտրությունների նախաշեմին: Կասկած չի հարուցում, որ էներգակորի շուրջ ընթացող գործընթացները բազմապլան են եւ պարունակում են միմյանց հետ փոխկապակցված տնտեսական ու քաղաքական բաղադրիչներ:

***Տնտեսական գործոնը***

Այսօր բնական գազը ռազմավարական նշանակություն ունեցող կարեւորագույն հումքերից է: Այն նաեւ հիմնական էներգակիրներից մեկն է. Էլեկտրականության 20%-ն այսօր արտադրվում է գազի միջոցով, իսկ 2020թ. այդ ցուցանիշը կհասնի 30%-ի: Միեւնույն ժամանակ, այն կարեւոր դերակատարում ունի քիմիական արդյունաբերությունում, որտեղ օգտագործվում է արդյունահանվող գազի մոտ 5%-ը: Մասնավորապես, բնական գազի բաղադրամասի՝ էթանի մշակումից ստացվում է պոլիէթիլեն, որից պատրաստվում են ամենազանազան կենցաղային իրեր եւ խողովակներ: Նկատենք, որ եթե 1տ էթանի գինը կազմում է \$80-90, ապա պոլիէթիլենինը հասնում է մինչեւ \$3700-ի: Ներկայումս գազի հետախուզված համաշխարհային պաշարները կազմում են մոտ 150 տրիլիոն մ<sup>3</sup>, իսկ պոտենցիալ պաշարները գնահատվում են 280-300 տրիլիոն մ<sup>3</sup>: Տարեկան ընդերքից կորզվում է մոտ 2,5 տրիլիոն մ<sup>3</sup> գազ: Սակայն, չնայած նրան, որ այդ ցուցանիշն աճի միտումներ ունի, փորձագետները գտնում են, որ գազի պաշարները, ի տարբերություն նավթի, բավարարելու են 21-րդ դարում մարդկության պահանջարկը: Նշենք, որ գազը հասնում է սպառողներին գլխավորապես գազատարների միջոցով, որոնց ընդհանուր երկարությունը հասնում է 1 մլն կմ-ի:

Գագի համաշխարհային պաշարների 33%-ը գտնվում է Ռուսաստանում, որն այդ ցուցանիշով գրավում է աշխարհում առաջին տեղը (Երկրորդ հորիզոնականը գրաբեցնում է Երանը՝ 15.8%, իսկ հետխորհրդային տարածքում գագի զգալի պաշարների են տիրապետում Թուրքմենստանը՝ 2%, Ուզբեկստանը եւ Ղազախստանը՝ մոտ 1.3%): Տիրապետելով գագի նման հսկայական պաշարների, ունենալով նաև գազարդյունահանման, տեղափոխման եւ մատակարարման բավական զարգացած ենթակառուցվածքներ՝ Ռուսաստանը, ինչպես նաև կինում ԽՍՀՄ-ը, այդ հումքը վերածել է տնտեսական ռազմավարության կարեւոր գործոնի: Ներկայումս գագի ոլորտի գործառույթներն իրականացնում է հանրահայտ «Գազպրոմ» ընկերությունը, որը տնօրինում է ռուսական գագի պաշարների ավելի քան 60%-ը եւ որի բաժնետոմսերի 38%-ը պատկանում է պետությանը: Այդ ընկերության տարեկան շահույթը կազմում է ավելի քան \$40 մլրդ (բավական է նշել, որ «Գազպրոմ»-ը միայն Եվրոպա արտահանում է շուրջ 150 մլրդ մ<sup>3</sup> գագ, որի միջին գինը 1000 մ<sup>3</sup>-ի համար կազմում է \$250):

Վերադառնալով ԱՊՀ տարածքում եւ մասնավորապես՝ Ռուսականայի հետ գագի շուրջ ընթացող գործընթացներին՝ պետք է նկատել, որ ռուսական կողմն այդ հականարտությունում գործել է կոչտ, պրագմատիկ եւ գրագետ: 2005թ. Դեկտեմբերի 31-ին վերջանում էր պայմանագիրը, համաձայն որի՝ Ռուսական գնում էր ռուսական գագ \$50-ով 1000 մ<sup>3</sup>-ի համար, իսկ Եվրոպա տեղափոխվող գագի տարանցման համար այդ հանրապետությունը ստանում էր \$1.01 գազատի 100 կմ-ից: Նոր գնի վերաբերյալ ռուս-ռուսական բանակցությունները սկսել էին դեռ գարնանը, եւ նախապես խոսքը \$160-ի մասին էր 1000 մ<sup>3</sup>-ի համար: Ռուսականական կողմը կտրականապես հրաժարվում էր այդ գնից՝ պնդելով, որ իհմնավորված գինը կազմում է ոչ ավելի, քան \$60-65: Դեկտեմբերին բանակցային գործընթացը մտավ փակուղի, եւ «Գազպրոմ»-ը հայտարարեց, թե այդուհետ գագը վաճառելու է արդեն \$230-ով: Ընկերությունը սպառնաց փակել Ռուսականայի «գագի ծորակը», եթե պայմանագիրը չկնքվի մինչեւ 2006թ. հունվարի 1-ը: Միաժամանակ, ռուսաստանյան իշխանություններն առաջարկեցին Ռուսականային գեղչ պայմաններով \$3,6 մլրդ վարկ եւ/կամ 2006-ի առաջին եռամսյակում գները պահել հնի չափով, սակայն պայմանագիրը նախապես ստորագրելուց հետո: Ռուսականական «Նավթագագ»-ն այս առաջարկությունները մերժեց:

Ս.թ. հունվարի 1-ին «Գազպրոմ»-ը դադարեցրեց գագի մատակարարումը, որին «Նավթագագ»-ը պատասխանեց գագի շորթումներով, ինչը, իր հերթին, հանգեցրեց Եվրոպական Երկրներին մատակարարվող գագի ծավալի նվազմանը: ճիշտ է, «Գազպրոմ»-ը փոխհատուցեց

Եվրոպային այդ վնասը, սակայն ակնհայտ էր, որ նման իրավիճակը չեր կարող երկար տեսել: Դետեւեցին Բեռլինի եւ Եվրոպական այլ մայրաքաղաքների ծնշումները կիեւի վրա. պարզվեց, որ էներգետիկ խնդիրներն ավելի կարեւոր են, քան «նարնջագույն հեղափոխության» գաղափարները: Զուգահեռ՝ հաշտեցնող-միջնորդական առաքելություններ էին գործում նաեւ Մոսկվայում (այս գործում մեծ էր Գերմանիայի նախկին կանցլեր Շրյոդերի դերը): Ի վերջո, «Նավթագազ»-ի ղեկավար Ալեքսեյ Իվչենկոն հունվարի 4-ին ստորագրեց հնգամյա պայմանագիր: Դա կարելի է համարել որպես «Գազպրոմ»-ի եւ ընդհանրապես ռուսաստանյան տնտեսության հաջողություն, քանի որ.

❖ Նախկինում Ուկրաինային տարեկան շուրջ 17 մլրդ մ<sup>3</sup> զազ մատակարարելու դիմաց \$800-900 մլն ստանալու փոխարեն «Գազպրոմ»-ի շահույթն այդ ուղղությամբ այսուհետ կազմի ավելի քան \$4,5մլրդ:

❖ Համաձայն նոր պայմանագրի՝ հաշվարկները կատարվելու են միայն տարադրամով, ինչն ավելի թափանցիկ կդարձնի ֆինանսական հաշվարկները եւ, հետեւաբար, կնվազեն կոռուպցիոն ռիսկերը:

❖ Ոչ ուշ, քան մինչեւ փետրվարի 1-ը պետք է ստեղծվի ռուսական վերահսկողության տակ գտնվող մի նոր ընկերություն, որը զբաղվելու է Ուկրաինայում ռուսական գազի փոխադրման, իրացման եւ հնարավոր կրկնակի արտահանման (օրինակ՝ Մոլդովա) հարցերով (նախկինում այդ գործառույթները կատարում էր «ՌուսՈւկրեներգո» կազմակերպությունը): Այդ նոր ընկերության ստեղծման հիմնական նպատակներից է նվազեցնել Ուկրաինայում ռուսական գազի շորթման հնարավորությունները:

❖ Գազի գների բարձրացումն անխուսափելիորեն իջեցնելու է ուկրաինական արտադրանքի (խոսքը հիմնականում էներգատար մետալուրգիայի եւ քիմիական արդյունաբերության մասին է) մրցունակությունը ԱՊՀ եւ միջազգային շուկաներում: Համապատասխանաբար բարձրանալու է ռուսական արտադրանքի գրավչությունը, քանի որ Ռուսաստանում բնական գազի մերժին գները 1000 մ<sup>3</sup>-ի համար կազմում են մոտ \$40:

Պայմանագիրը ստորագրելուց հետո «Նավթագազ»-ի ղեկավար Իվչենկոն հայտարարեց, թե ուկրաինական կողմը շահել է, քանի որ «Գազպրոմ»-ը վաճառելու է գազը \$230-ով վերոհիշյալ «ՌուսՈւկրեներգո»-ին, իսկ վերջինս մատակարարելու է այն ուկրաինական կողմին \$95-ով: Սակայն դա ընդամենը տեղեկատվական «հնարք» էր: Խնդիրն այն է, որ Ուկրաինան տարեկան սպառում է մոտ 50 մլրդ մ<sup>3</sup> միջինասիական գազ (\$55-65-ով) եւ ընդամենը 17 մլրդ՝ ռուսական (ներկրվող ծավալի մոտ 1/3-ը): Ուկրաինա է մտնում «ռուսական» եւ «միջինասիական» գազերի խառնուրդը, որի միջինացված գինը կազմում է մոտ \$ 95: Որոշ մեկնաբաններ

Ուկրաինական կողմի համար նվաճում են համարում Եվրոպա տեղափոխվող տարանցիկ գազի վճարումների ավելացումը։ Ներկայումս ռուսական կողմը 100կմ տարանցման համար վճարում է \$1.6 (նախկինում՝ \$1.01)։ Սակայն ամեն ինչ պետք է դիտարկել համեմատության մեջ։ նախկինում ուկրաինացիներն այդ վճարը ստանում էին տեղափոխվող գազի 10%-ի տեսքով, իսկ ներկայումս նրանք ավելի ստացած գումարով նույնքան գագ չեն կարող գնել։

### **Քաղաքական համատեքստը**

Ինչպես հայտնի է, ս.թ. մարտի վերջին պետք է տեղի ունենան Ուկրաինայի խորհրդարանի՝ Բարձրագույն Ռադայի ընտրությունները։ Դրանց նշանակությունը լրացուցիչ մեծացել է, քանի որ 2006-ի հունվարի 1-ից սկսել են գործել սահմանադրությունում կատարված փոփոխությունները, համաձայն որոնց՝ Ուկրաինան վերածվել է կիսանախագահական-կիսապառամենտական հանրապետության։ Այս ամենի համատեքստում գազի գների շուրջ ընթացող ռուս-ուկրաինական հակամարտությունն անմիջապես քաղաքական բովանդակություն ձեռք բերեց, որից փորձեցին յուրովի օգտվել ուկրաինական քաղաքական դաշտի գրեթե բոլոր դերակատարները։ Ակնհայտ էր նաեւ, որ Կիեւում ընթացող գործընթացների մի մասն ուղղորդվում էր Մոսկվայի կողմից։

Մասնավորապես, պատահական չպետք է համարել, որ 2005-ի դեկտեմբերի վերջին Ռուսաստանի Գլխավոր դատախազությունը Յուլիա Շիմոշենկոյի վրայից հանեց բոլոր այն մեղադրանքները, որոնք նախկինում հարուցվել էին կոռուպցիոն բնույթի գործողությունների առիթով։ Պատահական չէր նաեւ, որ նախագահ Յուշենկոյի նախկին համախոհն առաջինը սկսեց ապակյունացնել ներկայիս քաղաքական իրավիճակը։ Մասնավորապես՝ Շիմոշենկոն դատական գործ հարուցեց «Նավթագագ»-ի դեկավար Իվչենկոյի դեմ, իսկ Բարձրագույն Ռադան որոշում ընդունեց պաշտոնանկ անել Յուրի Եխանուրովի գլխավորած կառավարությունը։ Դա մերժվեց նախագահ Յուշենկոյի կողմից, սակայն հանգեցրեց իրավաբանական ճգնաժամի, քանի որ պարզվեց, որ Ուկրաինայում դեռեւ բացակայում է կազմավորված Սահմանադրական դատարանը, որն իրավասու լիներ որոշում ընդունել վիճելի հարցերի վերաբերյալ։ «Գազային պատերազմը» ակտիվացրել է նաեւ նախկին վարչապետ Յանուկովիչին հարող ուժերին։ Տպավորությունն այնպիսին է, որ ուկրաինական ընտրանիում եղած հակասություններն այսօր ավելի քան սրվել են եւ պայքարն ընթանում է «բոլորը՝ բոլորի դեմ» սկզբունքով։ Ստեղծված իրադրությունում քաղաքական գարգացումներն այդ հանրա-

պետությունում դարձել են անկանխատեսելի: Այդ իրավիճակը շտապեցին արձանագրել օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունները. «Ֆիչ» միջազգային գործակալությունը նկատելի հօնքում է Ուկրաինայի վարկանիշը՝ դրանից բխող հետեւանքներով: Նույն գործակալության փորձագետների կանխատեսմամբ՝ այդ հանրապետությունում 2006թ. սպասվում է ընդամենը 1-2% ՀՆԱ աճ:

Ուկրաինայի քաղաքական համակարգի ապակայունացմանը նպաստում է նաև ռուսաստանյան ԶԼՄ քարոզչությունը, որը Յուշչենկոյին եւ նրա աջակիցներին ներկայացնում է որպես անլուր քաղաքական գործիչներ: Յարկ է նաև նշել, որ, իր հերթին, ուկրաինական ԶԼՄ-ն փորձ է կատարում Ռուսաստանից կերտել թշնամի կայսրության կերպար:

Որոշ վերլուծաբանների կարծիքով՝ Կիեվում սկսված քառտիկ գործընթացները հենց այն են, ինչին ձգտում է Կրեմլը: «Խաղաղ պայմաններում» Յուշչենկոյի վարչակազմը հստակորեն «հեռացնում» էր հանրապետությունը Ռուսաստանից: Ստեղծված խառնաշփոթը գուցե եւ հնարավորություն տա Մոսկվային՝ ձեւավորել հարեւան երկրում այն քաղաքական ուժերը, որոնք սկզբնական փուլում կհավասարակշռեն Յուշչենկոյի «արեւմտյան» միտումները, իսկ հետագայում գուցե եւ փորձեն «ազատվել» ներկայիս արեւմտամետ առաջնորդից:

Աշխարհաքաղաքական կողմնորոշումների համատեքստում պետք է նշել, որ «գազային պատերազմում» Ուկրաինային հետեւողականորեն աջակցում է միայն ԱՄՆ-ը: Որոշ ուկրաինական քաղաքական գործիչների եւ անկախ վերլուծաբանների կարծիքով՝ Ուկրաինայի սկզբնական անզիջում դիրքորոշումը գազի խնդրում պայմանավորված էր աներիկյան համապատասխան երաշխիքներով: Մասնավորապես, տեղեկատվական դաշտում հայտնվեցին նյութեր, որտեղ խոսվում էին Ղրիմում ԱՄՆ ԿՎՊ ղեկավար Գոռսի եւ Յուշչենկոյի հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների մասին:

Բնորոշ է նաև, որ անգամ գազի վերաբերյալ պայմանագրի կնքումից հետո ԱՄՆ պետքարտուղար Ջոնդոլիզա Ռայսը հանդես եկավ Ռուսաստանի դեմ կոշտ հայտարարությամբ: Սակայն Կրեմլը չընկրկեց եւ այդ առիթով բողոքի նոտա հղեց ԱՄՆ-ին: Մոսկվայի նման հաստատուն դիրքորոշումը պայմանավորված է ոչ միայն Ռուսաստանի պետականության մասնակի վերականգնումով եւ տնտեսական վերելքով. այստեղ պետք է առաջին հերթին կարեւորել Ռուսաստանի նոր՝ ակտիվ եւ բազմաչափ քաղաքականությունը, որի շնորհիվ սկիզբ դրվեց այդ երկրի՝ քաղաքական մեկուսացումից դուրս գալու գործընթացին:

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ԿԱՐՍ-ԱԽԱԼՔԱԼԱՔ-ԹԲԻԼԻՍԻ-ԲԱՔՈՒ  
ԵՐԿԱԹՈՒՂԻՆ  
Դայկ Դեմոյան**

Գաղտնիք չէ, որ ներկայումս թե՛ ներքաղաքական եւ թե՛ արտաքին քաղաքական ոլորտներում Թուրքիայի Յանրապետությունն ապրում է իր գոյության, թերեւս, բախտորոշ ժամանակափուլերից մեկը: Այլ կերպ ասած՝ թուրքական ներքին եւ արտաքին քաղաքականությունը ներկայումս հակազգնաժամային ուղղվածություն է կրում՝ փորձելով արդյունավետ լուծումներ գտնել ներքին եւ արտաքին մարտահրավերներին: Անկարայի համար օրակարգի թիվ մեկ խնդիրն է հնարավորինս կարճ ժամկետում դառնալ Եվրամիության լիիրավ անդամ, մի քայլ, որը լուծում է տալու Թուրքիայի առջև ծառացած լուրջ հիմնախնդիրներից շատերին: Դրա համատեքստում, թերեւս, կարեւորվում է նաեւ Թուրքիայի ազգային եւ պետական ինքնության հետագա սահմանումների ճակատագիրը: Սակայն այս ուղղությամբ Անկարայի հաջորդության հասնելու հեռանկարները դեռ մշուշու են:

Վերջին տարիների զարգացումները լուրջ փոփոխություններ մտցրին Թուրքիայի արտաքին քաղաքական առաջնայնություններում, հատկապես թուրք-ամերիկյան հարաբերություններում: Թուրքական իշխանությունների՝ իրաքի հարցում որդեգրած դիրքորոշման արդյունքում՝ Վաշինգտոնում համապատասխան գնահատականներ տրվեցին եւ եզրահանգումներ արվեցին նախկինում սերտ դաշնակցի համբավ վայելած Անկարայի քաղաքականությանը:

Թուրքիա-Եվրամիություն հարաբերությունները, չնայած 2005թ. հոկտեմբերի 3-ին անդամակցության բանակցությունների սկսման համար տրված համաձայնությանը, ավելի շուտ չկայացող երկխոսության տպավորություն են թողնում: Լիիրավ անդամակցության հեռանկարը մնում է խիստ անորոշ, եւ դրա անուղղակի վկայությունը հանդիսացավ ԵՄ կողմից Թուրքիային ներկայացված թվով 150 նախապայմանների առաջադրումը, որոնցից շատերի նկատմամբ, բացի անզիջում դիրքորոշումից, Անկարան դժվար թե այլընտրանք ունենա:

Թուրքական պետական, հասարակական-քաղաքական ու տնտեսա-

կան ոլորտներում առկա ճգնաժամային երեւույթները ստեղծում են անկայուն մի իրավիճակ, որը, պայքարունավոտանց լինելով հանդերձ, շատ քիչ հնարավորություններ է թողմում երկիրն ավանդական դեղատոմսերով, ինչպես, օրինակ, զինվորական հեղաշրջման միջոցով, կայունացնելու:

Ստեղծված իրավիճակն ուղղակիորեն անդրադառնում է թուրքական պետականության հիմնարար սկզբունքների եւ արտաքին առաջնայնությունների վերանայման եւ ազգային ինքնագիտակցության վերարժեքավորման գործընթացների վրա, ինչի վկայությունն է մեծ թափ առած խևանականացման երեւույթը: Այն արդեն ամուր տեղ է ապահովել թուրքական քաղաքական դաշտում: Մրան կարելի է գումարել նաեւ Թուրքիայի բնակչության մեծամասնության շրջանում արդեն իսկ ամուր դիրքեր ունեցող հակաամերիկյան տրամադրությունները: Ինչ վերաբերում է Եվրոպական անդամակցության նկատմամբ գոյություն ունեցող հասարակական տրամադրություններին, ապա ներկայումս խոսքը ոչ թե թերահավատների բանակի համալրման մասին է, այլ ուղղակի օրեցօր աճող հակաեվրոպական տրամադրությունների: Ստեղծված իրավիճակում աշխարհաքաղաքական ցուցվանգի մեջ չհայտնվելու համար Անկարան արդեն սկսել է լուրջ ուշադրություն դարձնել Երկրի համար կենսական նշանակություն ունեցող այլընտրանքային արտաքին ռազմավարական ուղղությունների մշակմանը, որոնց շուրջ Թուրքիայում բարձրածայնում են պաշտոնական եւ ոչ պաշտոնական մակարդակներով:

Անկարայի համար, որոշ առումով, այլընտրանքային է դիտվում Ուսւաստանի եւ Իրամի հետ հարաբերությունների հետագա սերտացումը, ինչը լիովին տեղակորվում է թուրքական, այսպես կոչված, «Եվրասիական» գաղափարախոսության համապատկերում: Սակայն էներգետիկ աղբյուրներից, մասնավորապես՝ գազի մատակարարումից բացի, այս Երկրների (որոնք թուրքական գանգվածային գիտակցության մեջ, որպես կանոն, դիտվում են նաեւ պատմական ախոյանների կարծրատիպի տեսանկյունից) հետ հարաբերությունների հետագա խորացումն այնքան էլ հավանական եւ նախընտրելի չի դիտվում:

Մյուս, առավել հավանական տարրերակն է Եվրասիական ուղղության թյուրքական վեկտորի վերակտիվացումը: Յետխորհրդային տարիներին «ազգական երկրների եւ ժողովուրդների» նկատմամբ Թուրքիայի քաղաքականությունը, համապատասխան ռեսուրսների եւ հնարավորությունների սահմանափակության, ինչպես նաեւ աշխարհագրական անմիջական կապի բացակայության պատճառներով, չարդարացվեց՝

տապալելով վերջինիս հեռուն գնացող, բայց խիստ անհաշվենկատ ծրագրերը:

Թերեւս, այս երկրների հետ անմիջական կապ ստեղծելու ցանկությունն է, որ Անկարային ստիպում է համապատասխան ուղիներ փնտրել՝ ի հավելումն նազի եւ օազի կառուցվելիք խողովակատարների: Այս առումով Վրաստանը դիտվում է որպես հուսալի տարանցիկ երկիր՝ թթախոս հանրապետությունների հետ տրանսպորտային շղթայով ագուցվելու համար: Ամենայն հավանականությամբ ննան կապի դեր կոչված է կատարել Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթուղին, որի շուրջ Անկարան Ադրբեյջանի աջակցությամբ արդեն սկսել է տեղեկատվական-քարոզչական գործողությունների համալիր ծրագիր՝ դրա մեջ ներքաշելով վրացական կողմին: (Ակնհայտ է, որ գոյություն ունեցող Կարս-Գյումրի երկաթգիծը, թեկուզ եւ դրա հետագա վերաբացման հնարավորության պարագայում, Անկարայի համար այնքան էլ հուսալի ու նախընտրելի չի թվում): Այս առումով միամիտ կլիներ կարծել, թե ննան թանկարժեք ծրագրի իրագործումը կոչված է միմիայն մեկուսացմելու Յայաստանի Յանրապետությունը: Սրանով, առաջին հերթին, Անկարան ապահովագրում է իր ռազմավարական դիրքերը՝ ստեղծելով պահուստային հնարավորություններ՝ եվրոպական ուղեծրից դուրս մնալու, ինչպես նաև ԱՄՆ-ի հետ հարաբերությունների հետագա սառեցման հեռանկարի պարագայում:

Դեռ 1993թ. Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթուղու կառուցման նպատակահարմարության շուրջ տեսակետներ հայտնվեցին թուրքական առաջին դեմքերի կողմից: Նախատեսվեց այս երկաթուղու շինարարությունն իրականացնել ՏՐԱՍԵԿԱ տրանսպորտային հաղորդակցությունների զարգացման ծրագրի շրջանակներում: Երկաթուղու կառուցման շահավետության շուրջ խոսակցություններն անպակաս էին թուրքական դեկապարների կողմից Թբիլիսի կատարած պաշտոնական այցերի ընթացքում: Թյուրքական աշխարհի արեւմտյան հատվածի զարգացման համար Թուրքիայի նախկին նախագահ Սուլեյման Դեմիրելը այս մայորուղու կառուցման նպատակահարմարության մասին բարձրաձայննեց նաեւ 1998թ. Աստանայում կայացած թյուրքական հինգերորդ գագաթաժողովի ժամանակ:

Երկաթուղու Կարս-Ախալքալաք հատվածի երկարությունը շուրջ 100կմ է, որից 68կմ-ն անցնելու է Թուրքիայի տարածքով իսկ 30-ը՝ Վրաստանի. այն հիմնականում անցնելու է բարդ եւ դժվարանցանելի աշխարհագրական գոտինով: Այս հատվածը, համաձայն փորձագիտական

Եզրակացությունների, ձմռանն առատ տեղումների պատճառով կարող է նաեւ անգործության մատնվել: Նախագծի վերջնական շահագործման ժամկետ նշվում է 2008 թվականը:

Ծրագրի ընդհանուր արժեքը տարբեր հաշվարկներով կազմում է 500-800 մլն դոլար: Ներկայումս Վրաստանը, Ադրբեյջանը եւ Թուրքիան լծված են հովանավորներ գտնելու գործին: Անցյալ տարվա նայիսի 25-ին Բաքվում ստորագրվեց Կարս-Թբիլիսի-Բաքու միջազգային տրանսպորտային միջանցքի ստեղծման հոչակագիրը, որի շրջանակներում էլ նախատեսվում է Կարս-Ախալքալաք երկարգի անցկացումը:

Նաեւ Երեւանի լոքրիստական աշխատանքների արդյունքում՝ ծրագրին արդեն դեմ են արտահայտվել ԱՄՆ կոնգրեսականները, իսկ Եվրոպական կողմը, հանձին Եվրոպայի խորհրդի պաշտպանության եւ արտաքին քաղաքականության հարցերով նախագահ Խավիեր Սոլանայի, կողմ է հանդես եկել Կարս-Գյումրի երկարուղու եւ հայ-թուրքական սահմանի վերաբացման օգտին:

Հայտնի է, որ Կարս-Գյումրի երթուղով երթեւեկությունը դադարեցվեց 1992թ., իսկ 1993-ից մինչեւ օրս այս մայորուղով որեւէ բեռնափոխադրում կամ ուղեւորափոխադրում չի իրականացվել: Հայ-թուրքական սահմանի եւ Կարս-Գյումրի երկարուղու վերաշահագործումը Անկարան շարունակում է պայմանավորել հայկական կողմի համար անընդունելի նախապայմաններով:

Եթե Թուրքիայի Եվրասիական ուղղությամբ քաղաքական եւ տնտեսական եքսպանսիայի համար 1990-ականներին որպես խափանիչ գործոն էին դիտվում Լեռնային Ղարաբաղը եւ նրա շուրջ ծավալված հակամարտությունը, ապա թուրքական այլընտրանքային-հեռանկարային հավակնությունների համար այդպիսի գործոնի դեր կարող է խաղալ մեծ մասամբ հայաբնակ Զավախչը: Այս պարագայում ակնհայտ է նաեւ Անկարայի կողմից արվող շեշտադրումների փոփոխությունը, այն է՝ նման երկարուղու կարեւորությունը երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Մասնավորապես՝ նման տեսակետ Երեւանում արտահայտեց Թուրք-հայկական գործարար կապերի զարգացման խորհրդի ներկայացուցիչ Բուրչու Գյուլբեքինը:

\* \* \*

Հասկանալի է, որ այս երկարուղու շինարարության շուրջ թուրքական նախաձեռնությունները հետապնդում են մի քանի նպատակներ, որոնցից հարկ է առանձնացնել տեղեկատվական-քարոզչական ներգործությունը

Եւ Երկաթուղու իրականություն դառնալուց հետո կիրառվելիք քաղաքականությունը: Ըստ այդմ՝

ա. Անկարայի համար այս Երկաթգիծը լուրջ լծակ է հանդիսանալու հայ-Վրացական հարաբերությունների վրա ներգործելու առումով:

բ. Լարվածության լուրջ եւ մշտական օջախն է ստեղծվելու Զավախքում, որին ապագայուն ավելանալու է նաեւ մսխեթցի թուրքերի Զավախք Վերադառնալու հեռանկարը: Այն ուղղակիորեն կոչված է նպաստելու Զավախահայության արտագաղթին, չնայած քարոզական նպատակներով այն ներկայացվում է որպես վերջիններիս սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում:

գ. Նախագիծն ուղղակիորեն նպաստելու է Զավախքում կենտրոնախույս տրամադրությունների ուժգնացմանը՝ միաժամանակ Զավախահայությանն ընձեռելով ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորություն՝ ի հակադրություն կենտրոնի: Սա կարող է Թբիլիսիին մղել ուժային քայլերի, որոնց դեպքում պաշտոնական Երեւանը կդիմի համարժեք քայլերի, որի արդյունքում լրջորեն կտուժեն հայ-Վրացական հարաբերությունները:

դ. Նախագիծն նպատակներից է ստիպել Վրացական կողմին՝ ավելի ակտիվացնել ռուսական ռազմակայամանների տարիաննան գործընթացը՝ դրանով իսկ հարմար նախապայմաններ ստեղծելով թուրք մսխեթցինների վերադարձի եւ նրանց շրջանում թուրքական ազդեցության տարածման համար:

ե. Ստեղծված անկայուն իրավիճակում կուժեղանա նաեւ զինված խմբավորումների ակտիվությունը տարածաշրջանում, որոնք լուրջ խաղաղողների դերակատարություն կունենան:

Անվիճելիորեն, այս ծրագիրը կոչված է նաեւ մեկուսացնելու Յայատանի Յանրապետությունը: Իսկ Թբիլիսին գիտակցաբար կամ անգիտակցաբար արդեն մտել է Անկարայի նախաձեռնած վտանգավոր խաղի մեջ:

Ի դեպք, անցյալ տարվա վերջին Տիրանայում կայացած Սեւծովյան երկրների համագործակցության հերթական գագաթաժողովի ժամանակ թուրքական կողմի քվեարկությունը հօգուտ Կարս-Գյումրի Երկաթուղու վերաբացման, թերեւս, ոչ այլ ինչ էր, քան Անկարայի հերթական քարոզչական հնարքներից մեկը: Ուստի մեզանում անհարկի ոգեւորություններն անտեղի են:

Աղբեջանն այս Երկաթուղու կառուցումը դիտում է որպես «տարածա-

շրջանային համագործակցության կարեւոր տարր»: Բավական է նշել, որ Ադրբեյջանի արտգործնախարար էլմար Մամեդյարովը 2006թ. սկզբին արդեն իսկ հայտարարել է, որ այս ժրագիրը Բաքու-Զեյխան նավթամուղի եւ Կարս-Էրզրում գազատարի հետ միասին Ադրբեյջանի համար դիտվում է որպես երրորդ առաջնայնություն:

Միաժամանակ, պետք է արձանագրել, որ Երեւանը բավական ռեսուրսներ ունի թուրք-ադրբեյջանա-վրացական այս խաղին հակաքայլեր պարտադրելու առումով՝ իր ձեռքում ունենալով ջավախսհայության վրա ներգործելու խաղաքարտը, որը, սակայն, պետք է օգտագործվի գրագետ՝ զգուշանալով սադրանքներից եւ անհաշվենկատ քայլերից:

## **ԹՈՒՐՔԻԱ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՇ Արտակ Շաքարյան**

Թուրքիա-ԵՄ հարաբերությունները մշտապես ճգնաժամային են եղել. Անկարայի արած գրեթե բոլոր քայլերը մեծ բարդություններով են զուգակցվել:

Երբ 1987թ. Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալը պաշտոնապես դիմեց ԵՄ-ին՝ լիիրավ անդամակցության հայտով, Թուրքիան դիտվում էր շատ հեռվում գտնվող մի երկիր, որը ոչ տնտեսական, ոչ էլ կոպենհագենյան քաղաքական չափանիշներով դեռ բոլորովին պատրաստ չէր: Միաժամանակ, Եվրոպան հանձն առավ ցույց տալ Անկարային, որ ճանապարհն այնքան էլ հեշտ չի լինի. նույն՝ 1987թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանն ընդունեց որոշում, որով ճանաչեց հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում եւ կոչ արեց Եվրախորհրդին ճնշումներ գործադրել Թուրքիայի վրա:

Այդուհանդերձ, երկու տարի անց՝ 1989թ. Թուրքիան մտավ նախապատրաստման գործընթաց:

1995թ. Թուրքիան դիմեց ԵՄ Մաքսային միությանը անդամակցության համար, եւ կրկին ԵՄ ներսում մեծ վեճ տեղի ունեցավ: Թուրքիայի համար առավել խնդրահարուց կարող էր լինել պաշտոնական Աթենքի դիրքորոշումը, սակայն Հունաստանը չօգտվեց վետոյի իր իրավունքից՝ փոխարենը ստանալով ԵՄ անդամների համաձայնությունը Կիպրոսի հետ անդամակցության գործընթաց սկսելու վերաբերյալ:

1997թ. Լյուքսեմբուրգում տեղի ունեցած գագաթողովի ժամանակ Թուրքիան պահանջեց, որ իրեն շնորհվի «լիիրավ անդամակցության թեկնածու երկրի» կարգավիճակ, ինչը երկար քննարկումների արդյունքում մերժվեց, քանի որ Թուրքիան ոչ մի կերպ դեռ չէր համապատասխանեցրել իր ներքին օրենսդրությունները կոպենհագենյան չափանիշներին:

Ամերիկայի Միացյալ Նահանգների լոբբիստական մեծածավալ աշխատանքներն արդյունք տվեցին, ու 1999թ. Հելսինկիում տեղի ունեցած գագաթողովին կրկին քննարկման դրվեց Թուրքիայի դիմումը: Թուրքիայի հանդեպ վարքագծի փոփոխության մեջ կարեւոր էր նաև այն, որ Գերմանիայում տեղի ունեցած ընտրություններում պարտություն էին կրել Թուրքիայի անդամակցությանը դեմ արտահայտվող քրիստոնեա-

դեմոկրատները եւ հաղթանակ տարել այս հարցում Անկարային աջակցող սոցիալ-դեմոկրատները: Թուրքիային շնորհվեց թեկնածու երկրի կարգավիճակ:

Քանի որ 2002թ. Անկարան ԵՄ չափանիշներին բավարար չափով դեռ չեր համապատասխանեցրել իր քաղաքական համակարգը, Կոպենհագենի գագաթողովի ժամանակ Եվրոպական երկրները հրաժարվեցին Թուրքիային հայտնել լիիրավ անդամակցության վերաբերյալ բանակցությունների սկսման ամսաթիվը:

Թուրքիայում իշխանության անցած Արդարություն ու զարգացում կուսակցությունը 2002թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում ստացել էր Թուրքիայի Ազգային Մեծ ժողովում ճնշող մեծամասնություն: Սրանց օգտվելով՝ սեղմ ժամկետներում ընդունվեցին գրեթե բոլոր բարեփոխումների վերաբերյալ օրինագծերը, որոնք պահանջվում էին ԵՄ կողմից: Փաստաթղթային կողմով կոպենհագենյան չափանիշների մեծ մասն ապահովվեց: Թեեւ ԵՄ-ում կասկածանքով վերաբերվեցին հապճեաց ընդունված այս օրենքների կենսագործման հավանականությանը, սակայն դա համարվեց ապագայի խնդիր:

2004թ. դեկտեմբերի 17-ին, Բրյուսելի գագաթողովում, երեւաց, որ Թուրքիայի անդամակցության հարցը դարձել է շատ Եվրոպական երկրների ներքաղաքական խնդիրներից մեկը: Բացի այդ, Կիպրոսը, որն արդեն դարձել էր Եվրամիության լիիրավ անդամ, պահանջեց, որ Թուրքիան ճանաչի իր ինքնիշխանությունը: Թուրքիան, հանդիսանալով Մաքսային միության անդամ, պետք է ստորագրեր նոր անդամների, այդ թվում նաև Կիպրոսի հետ հավելյալ պայմանագիր, ինչը նշանակելու էր այդ երկրի փաստացի ճանաչում, ինչից եւ խուսափում էր Թուրքիան: Խնդրի լուծումը հետաձգվեց, եւ Մեծ Բրիտանիայի ու Գերմանիայի աջակցությամբ բանակցությունների սկիզբ նշանակվեց 2005թ. հոկտեմբերի 3-ը:

2005թ. այդ օրը Լյուքսեմբուրգում ԵՄ անդամ երկրները, երկարատեւ քննարկումներից հետո, ընդունեցին Թուրքիայի հետ բանակցություններ սկսելու որոշում: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլահ Գյուլի խոսքերով «2005թ. հոկտեմբերի 3-ին Թուրքիան հասցրեց նստել մեկնող գնացքը»: Դրությունը, սակայն, դրանով չի հստականուն, քանի որ Եվրոպացի քաղաքական գործիչները հետքայլի հնարավորություն են թողել իրենց համար եւ Թուրքիայի հետ բանակցությունների գործընթացին վերջնաժամկետ չեն սահմանել: Այսինքն՝ նույնիսկ եթե Անկարան կարողացավ «բարձրանալ գնացք», ոչ ոք չի երաշխավորում, որ 2015-2020թթ. այդ գնացքով նա կհասնի լիիրավ անդամակցության բաղձալի կայարան:

Թուրքիայի ստվար բնակչությունը, տնտեսության տխուր վիճակը, քաղաքական անկայունությունը, ժողովրդավարության ցածր մակարդակը միայն սկիզբն են այն ընդգրկում ցուցակի, որի պատճառով Անկարան անցանկալի անդամ է Եվրամիության Երկրների համար։ Թուրքիայի լիիրավ անդամակցությանը դեմ են հիմնականում այն Երկրները, որոնք այդեն իսկ ունեն հոծ մահմեղական, մասնավորապես, Թուրքիայից ներգաղթած, բնակչություն։ Մտահոգման հավելյալ առարկա է այն, որ Թուրքիայի անդամակցությունն օժանդակվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից։ Իր մոտ 70 մլն բնակչությամբ Թուրքիան Եվրամիության որոշումների կայացման մեխանիզմում կարեւոր դեր կզբաղեցնի, իսկ ԵՄ-ը լուրջ կասկածներ ունի, որ Անկարան հանդիսանալու է Վաշինգտոնի «տրոյական ձիմ»։

Եվրամիությունն ընդհանրապես, իսկ Ֆրանսիան ու Գերմանիան՝ մասնավորապես, Անկարայի ընթացքը դանդաղեցնելու համար օգտագործում են քազմաթիվ միջոցներ՝ այդ թվում նաեւ խաղարկելով Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը։ Ֆրանսիան ու Գերմանիան, ինչպես նաեւ Եվրոպական մի քանի այլ Երկրներ, միայն վերջերս պաշտոնապես այս կամ այլ կերպ ճանաչեցին Հայոց ցեղասպանության փաստն ու այժմ Թուրքիայից անդադար պահանջում են նույնն անել։ Թեեւ Հայոց ցեղասպանության ճանաչումը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության ապաշրջափակումը, ԵՄ պահանջների ցուցակում չեն գտնվում, սակայն դրանք դեռ մնում են Եվրոպացիների գինանցում եւ կարիքի դեպքում կրկին գործի են դրվելու Անկարայի վրա ճնշումներ գործադրելու նպատակով, ինչպես դա արվեց հոկտեմբերի 3-ի նախօրյակին՝ սեպտեմբերի 28-ին, երբ ԵՄ խորհրդարանն ընդունեց որոշում, որով կոչ արեց Անկարային ճանաչել XX դարասկզբին տեղի ունեցած հայերի ցեղասպանությունը։

Այսուամենայնիվ, հոկտեմբերի 3-ը ցույց տվեց, որ Եվրոպական Երկրներն ամենեւին միասնական չեն իրենց արտաքին քաղաքականությունում ու հնարավորության դեպքում առաջ են տանում իրենց նեղ շահերն ու վարում «սեփական խաղ»։ Սրա վառ օրինակն է Ավստրիան, որը Թուրքիայի հետ բանակցություններն սկսելու հանդիպումների ժամանակ խիստ դիրքորոշում որդեգրեց ու արգելակեց բանակցությունների գործընթացը։ Վիեննան այս մոտեցման արդյունքում կարողացավ Թուրքիայի հետ բանակցային փուլ մտցնել նաեւ դավանակից (կաթոլիկ) Խորվաթիային, որը հանդիսանում է Եվրոպական տարածքում Ավստրիայի հովանավորյալը։

\* \* \*

2006թ. հունվարի 1-ից ԵՄ նախագահությունն անցմում է Ավատրիային: Անկարայի համար դա կարենոր խնդիր է՝ հաշվի առնելով այն, որ հունվար-փետրվարին սկսվելիք բանակցությունների թեմաներից են լինելու պայթյունավտանգ «Մաքսային միության» եւ «Ապրանքների ազատ տեղափոխման» հարցերը: Ավատրիայի ներկայացուցիչն արդեն հայտարարել է, թե «Ժամանակն է, որ Թուրքիան բարի կամք ցուցաբերի, որպեսզի հեշտացնի իր ուղին դեպի ԵՄ»: Խոսքը Թուրքիայի կողմից Կիպրոսի ճանաչման մասին է: Թուրքիայի այս խիստ դիրքորոշումն արգելակում է Եվրոպական քաղաքականության ընթացքը, մասնավորապես՝ ԵՄ-ՆԱՏՕ բանակցությունները: Անկարան հրաժարվում է բանակցությունների սեղանի շուրջ նստել Կիպրոսի հետ, ինչի հանդեպ արդեն սկսում են իրենց անհանդուրժողականությունը ցույց տալ Եվրոպացիները:

Կիպրոսի ճանաչման խնդիրը կրկին սրբելու է 2006թ. սկզբին կայանալիք «Ապրանքների ազատ տեղափոխման» վերաբերյալ թուրք-Եվրոպական բանակցությունների ժամանակ, քանի որ մինչեւ այժմ Թուրքիայի նավահանգիստները փակ են կիպրոսցիների առջեւ: Այսպիսով, առաջիկա ամիսներին Անկարայի հանդեպ ճնշումները սաստկանալու են: Ընդհանուր առմանք, կարելի է պնդել, որ թուրք-Եվրոպական հարաբերություններում Կիպրոսի հարցը լինելու է այն ականը, որ պայթելու է Անկարայի սիսալ քայլերի դեպքում:

Թուրքիային ներկայացվող առաջադրանքները չեն սահմանափակվում Կիպրոսով: Յոկտեմբերի 3-ից հետո Եվրահանձնաժողովն Անկարային ներկայացրեց 150 պահանջներից կազմված մի ցանկ, առանց որոնց իրականացման Թուրքիան լիիրավ անդամակցության հույս չի կարող ունենալ: Պահանջներն ունեն խիստ բնույթ եւ վերջնաժամկետ՝ 2 տարի: Ըստ այդ փաստաթղթի պահանջների՝ 2007թ. Վերջին Թուրքիան պետք է հրաժարվի մահապատճից, սահմանի խղճի ազատություն, քաղաքացիականների վերահսկողություն զինվորականության նկատմամբ, ստեղծի անկախ դատարանների համակարգ եւ այլն: Այս առումով բարդ խնդիր առջեւ է կանգնած զինվորական վերնախավը, որը մշտապես երկրում եղել է աշխարհիկության ու Եվրոպականացման ուղեծրի պահապանը: Թեեւ այժմ Եվրոպական բարեփոխումները Թուրքիան տանում են դեպի Արեւմուտք, սակայն մի կողմից՝ ծգտում են նվազագույնի հասցնել զինվորականության վերահսկողությունը, մյուս կողմից՝ գործելու լայն ազատություն են տալիս իսլամիստներին եւ քրդերին:

Ի հաստատումն վերոհիշյալի՝ վերջերս հայտնի «Foreign Affairs» ամսագրում հրապարակվեց մի հոդված, որն արտահայտում է Թուրքիայի գինված ուժերի (ԹԶՈՒ) պաշտոնական կարծիքը թուրք-եվրոպական հարաբերությունների շուրջ: Յոդվածը վերնագրված է «Թուրքական բանակի երթը դեպի Եվրոպա» եւ մեծ կարեւորություն ու լրջություն ունի՝ հաշվի առնելով թե՛ հրապարակման վայրը, թե՛ ստորագրությունները:

Թեև հոդվածում շեշտվում է, որ ԹԶՈՒ-ն կողմ է ԵՄ-ին եւ ոչ մի արգելք չի ստեղծում Թուրքիայի եվրոպական առաջընթացի համար եւ որ այդ որոշումը հավանության է արժանացել Թուրքիայի Գլխավոր սպայակույտի դեկավարի կողմից, սակայն նաեւ նշվում է, որ՝

1. ԹԶՈՒ սպասումը լիիրավ անդամակցությունն է. այլ արդյունքի դեպքում առկա խնդիրները միայն կխորանան:

2. Գործընթացում առկա մարտահրավերներն են Կիպրոսի ճանաչումը, իսլամիստների հզորացումը եւ քրդական անջատողականությունը, որոնք դեռ երկար ժամանակ կշարունակեն ցավոտ լինել:

3. Եթե ԹԶՈՒ թուլացման գործընթացը շարունակվի, իսկ քուրդ անջատողականները, իսլամիստները փորձեն լցնել այդ դատարկությունը, ապա եվրոպական բարեփոխումներին բանակի աջակցությունը կդադարի:

Իրավամբ, սպասելի է, որ քրդերի հետ կապված խնդիրը նույնպես լայն արձագանք ստանա ապագայում: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլահ Գյուլը բազմից ընդգծել է, որ «Թուրքիան չի նախապատրաստվում ընդունել «նոր ազգային փոքրանասնությունների» վերաբերյալ սահմանումը, եւ այդ կետը Թուրքիայի հետ բանակցային փաստաթղթում ընդգրկելու դեպքում Անկարան կիրաժարվի մասնակցել բանակցային գործընթացին»: Անհայտ է, որ Յյուսիսային Իրաքում անկախ Քրդստանի ստեղծման հեռանկարը, Թուրքիայում խոսրի ազատության, դատարանների անկախության, ինչպես նաեւ Եվրոպայի առավել համակ ուշադրության պարագայում՝ քրդերն ավելի մեծ ակտիվություն կցուցաբերեն ու այլեւս բարդ կլինի նրանց հեռու պահել երկրում որոշումների ընդունման գործընթացից:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ Թուրքիան դեռ հեռու է ԵՄ լիիրավ անդամակցությունից: Բանակցությունների սկիզբն ամենեւին էլ չի նշանակում Անկարայի հաղթանակն այս խնդրում, իսկ ընթացքը լի է ճգնաժամային իրավիճակներով, խնդիրներով, որոնք միտում ունեն ավելի ու ավելի սրանալու: Թուրքիան ձգտելու է առավելագույնս մոտենալ անդամակցության կարգավիճակին՝ հնարավորինս քիչ զիջումների գնով, իսկ ԵՄ-ը՝ ձգձգել Անկարայի լիիրավ անդամակցությունը՝ առաջադրելով նորանոր պայմաններ:

## **ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ** **Սուրեն Սարյան**

Եվրոպական ինքնության մասին հարցն այնքան է հին, որքան Եվրոպական քաղաքակրթությունը: Եվ այն միշտ ունեցել է տարբեր պատասխաններ: Այսօր այդ հարցադրումն ու պատասխանը դառնում են Եվրոպայի օրակարգի առաջին կետ:

Եվրոպական միասնական ինքնություն, այսինքն՝ նրա ժողովուրդների կողմից Եվրոպայի՝ որպես միասնական հոգեւոր ընդհանրության գիտակցում երբեւ գոյություն չի ունեցել: Այդ ինքնության բնորոշումներն այնքան են, որքան «Եվրոպայի» վարկածները սկսած Յոմերոսի «Իլիականից», վերջացրած ԵՄ չոր շարադրված սկզբունքներով:

Վերջին հիսուն տարիների ընթացքում Եվրոպական ինքնություն ասելով հասկանում էին հենց Եվրոպական Միության կողմից որդեգրված սկզբունքների ընդհանրությունը, որը կիսում են մայրցամաքի գրեթե բոլոր ժողովուրդները՝ ժողովրդավարություն, ազատություն, մարդու իրավունքներ, հանդուրժողականություն եւ Եվրոպական ազգերի հաշտություն:

Ի դեպ, Եվրոպական միավորման գործընթացներն ընթանում էին ազգային ինքնությունների պահպանման հիմքի վրա՝ «Միասնություն՝ բազմազանության մեջ» կարգախոսով: ԵՄ ճարտարապետները ձգտում էին ստեղծել միասնական Եվրոպա, որտեղ անհատը կլիներ ազատ՝ չամփոփելով իր երկրի սահմաններում, միեւնույն ժամանակ նա կմնար սերտորեն կապված իր ազգի ինքնության հետ:

Խնդիրը, սակայն, այն է, որ վերոնշյալ համաեվրոպական արժեքները մայրցամաքի ազգերը կիսում են տարբեր աստիճանով: Յիմնական արժեքը, որ միավորել է նրանց մեծ մասին՝ քրիստոնեությունն էր, թող որ տարբեր եկեղեցիների տեսքով, որի հիմնարար սկզբունքները ներկայումս մոռացության են մատնվում: Դեռևս Եվրոպական սահմանադրության նախապատրաստական աշխատանքների ժամանակ ի հայտ եկան սուլ հակասություններ այն հարցում, թե անհրաժեշտ է արդյոք այդ տեքստում հիշատակել Եվրոպայի քրիստոնեական ժառանգության մասին: Վերջում մնաց միայն լրոզված մի նախադասություն՝ մայրցամաքի ընդհանուր պատմական ժառանգության վերաբերյալ:

Իսկ քրիստոնեական արժեքներից հրաժարվելը հավասարագոր է սեփական պատմությունից եւ նախնիներից հրաժարվելուն: Չնոռանանք,

որ «ԵՎՐՈՊԱԳԻՆԵՐ» հասկացությունն առաջին անգամ հիշատակվել է VIII դարի ժամանակագրություններում՝ կապված Եվրոպա ներխուժած մահմեղական արաբներին դիմակայող քրիստոնյաների հետ։ Վատիկանն անգամ պնդում է, որ «կամ Եվրոպան քրիստոնեական է, կամ էլ դա Եվրոպա չէ»։ Այն է՝ քրիստոնեական արժեքները դիտվում են որպես ընդհանուր Եվրոպական ինքնության միջուկ, ինչը միավորում է իրենց պատմությամբ եւ ավանդությներով տարրերվող Եվրոպական ազգերին։

Սակայն ներկա ժամանակաշրջանում քրիստոնեությունը՝ որպես Եվրոպային բնորոշ հավատ եւ քաղաքակրթական համակարգ, հայտնվել է խոր ճգնաժամի մեջ, ինչը փաստում է անգամ Շռոմի պապը՝ խոսելով քրիստոնեական արժեքային համակարգի մեծագույն սպառնալիքի՝ գեղոնիստական հասարակության իրողության մասին։ այնպիսի հասարակության, որի հիմնական նպատակն ու իմաստը դառնում է կյանքի վայելումը՝ իր բոլոր ձեւերով։ Այդ հասարակության հաղթարշավի եւ քրիստոնեության ճգնաժամի ցուցիչներն են ծնելիության անշեղ անկումը, ընտանիքի մասին ավանդական պատկերացման ձեւախնդումը, միասնականության ազդեցության օրեցօր ուժեղացումը։

Այս ամենին գուգահեռ, մայրցամաքում տեղի են ունենում «դեպքեր», որոնք տագնապի ազդանշաններ են հնչեցնում Եվրոպական էլիտաների եւ ժողովուրդների համար։ Երբ ավելի քան մեկ տարի առաջ Նիդեռլանդներում սպանվեց ճանաչված կինոթեմադրող Թեո Վան Գոգը՝ այն բանի համար, որ ֆիլմ էր նկարահանել իսլամի կողմից կիրառվող բռնությունների մասին, այնուհետեւ, 2005թ. հուլիսին Լոնդոնում ահարեկչական գործողություններ կազմակերպեցին Անգլիայի քաղաքացիություն ստացած ներգաղթողների զավակները, իսկ նոյեմբերին արաբական աշխարհից ու Աֆրիկայից ներգաղթածների վայրագությունների հրապարակ դարձավ Փարիզը, փորձագետները, լրագրողները եւ սովորական քաղաքացիները սկսեցին խոսել ոչ բնիկների կողմից Եվրոպան զաքելու եւ ընդհանրապես Եվրոպայի վախճանի մասին։

Իսկ ընդհանը քսան-երեսուն տարի առաջ Եվրոպացիներն ուրախությամբ էին դիմավորում մահմեղական ներգաղթողներին՝ տեսնելով նրանց նախ եւ առաջ որպես էժան աշխատուժ։ Սակայն երբ ծնելիության Եվրոպական մակարդակն իջավ՝ հասնելով ամենացածր ցուցանիշների, Եվրոպան հայտնվեց ներգաղթածներից կախվածության մեջ։ Այսօր Եվրոպայի բնակչության մոտ 10%-ը կազմում են նրա սահմաններից դուրս ծնվածները, իսկ 20%-ը ծնվել է ներգաղթածների ընտանիքներում։

Մայրցամաքում ապրում է 15-20 մլն մահմեղական, ինչը կազմում է նրա բնակչության 4-5%-ը։ Տարբեր կանխատեսումներով, 2025թ.

Եվրոպայի մահմեդական բնակչությունը կկրկնապատկվի: Միայն Մեծ Բրիտանիայի, Նիդեռլանդների եւ Բելգիայի խոշորագույն քաղաքների բնակչության կեսից ավելին արդեն 2015թ. բաղկացած է լինելու ոչ բնիկներից:

Եկվորները ցանկություն չունեն ինտեգրվել Եվրոպական ինքնությանը. նրանք ապրում են Ֆրանսիայում, Անգլիայում, Դուանդիայում, սակայն ֆրանսիացի, անգլիացի կամ հոլանդացի չեն: Իսկ 20-րդ դարում համաշխարհային երկու պատերազմ տեսած աշխարհամասի կեցվածքը շարունակում է մնալ հաճբերելն ու հանդուրժելը, ազգայնանոլությունից խուսափելը, ջարդերի ու ահաբեկչական գործողությունների պատճառները սոցիալ-տնտեսական ոլորտում, ներգաղթածների հանդեպ բավարար ուշադրություն չդրսեւորելու, նրանց դաստիարակության մակարդակի մեջ որոնելը:

Սակայն «մեղմ ինտեգրացիայի» արեւմտաեվրոպական սկզբունքն իրեն չարդարացրեց, քանի որ այն տեսնում է իիվանդության հետեւանքները՝ շրջանցելով պատճառները: Աբսուրդի հասցված քաղաքական կոռեկտությունն այլևս չի կարող շղարշել այն իրողությունները, որոնց բախվում է այսօրվա Եվրոպան:

Եվրոպայի շատ երկրների հասարակական կյանքում ջարդարարության սոցիալական հետագիծն անցնում է էքնիկ ու կրոնական «խրամատների երկայնքով», որոնք միաժամանակ նաեւ մշակութային են: Ֆրանսիական հեղափոխության մեջ իդեալը՝ ազգը իբրեւ հավասար իրավունքներ ու պարտականություններ ունեցող քաղաքացիների հանրություն՝ անկախ դավանանքից ու ծննդավայրից, տեղի տվեց փակ անկլավների հետ «խաղաղ համակեցության» պայթյունավտանգ գաղափարի առջեւ: Անկլավներ, որոնք ինքնահաստատման ժիգեր են գործադրում եւ փորձում ապրել սեփական ինքնավար կանոններով: Դաշվի չառնվեց, որ մշակութային տարբերություններն ավելի նվազ չափով են ենթակա փոփոխությունների, քան սոցիալական եւ քաղաքական իրողությունները: Զախը կարող է դառնալ աջ, աղքատը՝ հարուստ, սակայն մահմեդականը կամ արաբը՝ քրիստոնյա կամ ֆրանսիացի՝ հազիվ թե: Արդյունքում՝ հոլանդացիները, անգլիացիները, ֆրանսիացիները հայտնվեցին իրենց բազմակուլտուրալիզմի ավերակների առաջ:

Այսօր Եվրոպայում եւ նրա սահմանների մոտ բախվում են ոչ թե քրիստոնեական եւ իսլամական քաղաքակրթությունները, այլ հետքրիստոնեական աշխարհիկ-լիբերալ արժեքներն ու մահմեդականների ավանդական արժեհամակարգը: «Եթե պահպանվեն ծնելիության ներկայիս տեմպերը, - գրում է բրիտանացի լրագրող Թոմաս Բլենքլին իր «Արեւ-

մուտքի վերջին հնարավորությունը» գրքում,- եթե պահպանվի Եվրամիության արդի քաղաքականությունը, եթե պահպանվի ներկայիս անմիտ հանդուրժողականությունը չհանդուրժողների հանդեպ, եթե Եվրոպայի (որոշ չափով՝ նաև Աներիկայի) մտածելակերպը չփոխվի, ապա արեւմտյան արժեքները եւ կենսակերպը դուրս կմղվեն Եվրոպայից արմատական իսլամի արժեքների կողմից»:

Ծնելիության կամ բնական վերարտադրման անկումն իրոք դառնում է արեւմտյան քաղաքակրթության լրջագույն խնդիրը: Յայտնի է Բորդոյի մոլլա Օմարի արտահայտությունը. «Մենք կհաղթենք քրիստոնյաներին միայն մեր կանանց պտղաբերությամբ: ԶԵ՞՞ո՞ որ ֆրանսուիհմները, որպեսզի ազատ լինեն, չեն ուզում ծննդաբերել: Մենք էլ կստիպենք նրանց խնամել մեր երեխաներին»:

Այս ամենի արդյունքում՝ Եվրոպայում ի հայտ կգան տարածքներ, որոնք չեն վերահսկվի կենտրոնական կառավարության կողմից, ասենք՝ ֆրանսիական «Կոսովո» կամ բրիտանական «սուննի եռանկյունի»: Այսպիսով, շատ հնարավոր է, որ առաջիկա 20-30 տարում Եվրոպան իրոք վերածվի «Եվրաբիայի», եթե...

Պատմության մեջ որեւէ միտում անվերջ չի տեսում: Եվ այս միտումն էլ կարող է ընդհատվել: Եվրոպան մտնում է իր ինքնության փոխակերպման մի փուլ, ինչը պահանջելու է որոշակի քայլեր ձեռնարկել:

Այս մարտահրավերը հետզիետե կանգնեցնելու է Եվրոպային նոր քաղաքականություն առաջ քաշելու անհրաժեշտության առջեւ եւ ասպարեզ է բերելու նոր որակի առաջնորդների՝ եապես տարբեր Եվրոպայի այսօրվա գործիչներից, որոնք ունակ չեն տեսնել վաղվա օրը եւ մտածում են միայն մարտավարական մանր խնդիրների մասին: Գնալով թափ են հավաքելու ավանդական-քրիստոնեական արժեքային համակարգին վերադառնալու եւ «օտարների» եքսպանսիային դիմակայելու կոչ անող քաղաքական ուժերը: Արդեն հիմա Եվրոպացիներից շատերը բացահայտ ասում են. «Մենք չափազանց մեղմ էինք: Թեյ խմելու օրերն անցել են»: Քաղաքական կոռեկտությունը կամ հանդուրժողականությունը որոշ աջակողմյան քաղաքական գործիչներ անվանում են Եվրոպայի աքիլեսյան գարշապարզ, իսկ մահմեղական ներգաղթողներին՝ տրոյական ձի:

Նախ, Եվրոպական Երկրները լուրջ խոչընդոտներ կստեղծեն ներգաղթի ճանապարհին՝ կտրուկ նվազեցնելով ներհոսքը մահմեղական աշխարհից: Գուցե եւ արտաքսեն արդեն ներգաղթածների զգալի մասին: Աշխատուժի հարցը, թերեւս, կարելի կլինի լուծել կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրներից ներգաղթի հաշվին: Լիովին սպասելի է, որ մոտ ապագայում Ֆրանսիան, Շոլանդիան, Գերմանիան իրենց սահման-

ները բացեն Լեհաստանից, Ուկրաինայից, Ռումինիայից ներգաղթողների առջեւ. այսինքն՝ այն մարդկանց, ովքեր չեն ժխտում արեւմտյան արժեքները, այլ օրգանապես լրացնում են դրանք:

Եվ ամենակարեւորը. Եվրոպայի միջուկ հասկացությունը դարեր շարունակ կապվում է այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Իտալիան, Ֆրանսիան, Հոլանդիան, Մեծ Բրիտանիան: Այժմ, սակայն, Եվրոպական ինքնության փոխակերպման այս փուլի ընթացքում լիովին հավանական է, որ Եվրոպայի միջուկը տեղաշարժվի դեպի արեւելք, եւ շուտով «Եվրոպականության» նոր կրողները դառնան Գերմանիան, Լեհաստանը, Ուկրաինան, Չեխիան, Հունգարիան, Բալթյան երկրները (անգամ նույնիսկ Հայաստանն ու Վրաստանը, որոնք բոլոր հնարավորություններն ունեն նոր Եվրոպայի մաս կազմելու): Այդ երկրները չեն բախվում իրենց Եվրոպական ինքնությունը կորցնելու հիմնախնդրի հետ, այլ հակառակ՝ կարող են նոր շունչ հաղորդել համաեվրոպական քաղաքակրթությանը: Ճիշտ այնպես, ինչպես ժամանակին Եվրոպա հասկացության կրողներն էին Հունաստանը, ապա Հռոմը, բայց երբ այդ երկրներ ներխուժեցին բարբարոսները եւ կործանեցին իին մշակույթը, «Էստաֆետը» փոխանցվեց Ֆրանսիային, Իտալիային, Խսանիային, իսկ Հռոմն ու Հունաստանն այսօր վայելում են իրենց ծերությունը՝ վերածվելով զբոսաշրջության կենտրոնների: Նույն ճակատագիրը, պետք է ենթադրել, այժմ սպասվում է Փարիզին, Լոնդոնին, Ամստերդամին:

Պարադոքսալ կերպով, «նոր բարբարոսներից» պաշտպանվելու գործում Եվրոպան կարող է ելք գտնել նրանց շնորհիվ, ում դարեր շարունակ ընկալել է որպես Եվրոպական աշխարհի համար օտար մարդիններ՝ սերբեր, ուկրաինացիներ, ռուսներ: Նման ձեւով Հռոմեական կայսրությունը, սարսափագրու ասիական հոներից պաշտպանվելու համար, դիմել էր Արեւելքից եկած մյուս բարբարոսների՝ գոթերի օգնությանը: Յետո էլ նույն վայրենի հոները (հունգարները) եւ լիտվացիները դարձան Եվրոպայի պաշտպանները մոնղոլներից եւ օսմանցի թուրքերից:

Պատահական չէ, որ այսօր Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրները ցույց են տալիս տնտեսական ավելի դիմամիկ առաջընթաց, քան արեւմտաԵվրոպական երկրները: Բացի այդ, նրանցում սեփական ազգային ինքնության գիտակցման եւ օտարների նկատմամբ խիստ վերաբերնությ աստիճանն ավելի բարձր է:

Սակայն Եվրոպական պատմության զարգացման այս տարբերակի համար գոյություն ունեն եւ լուրջ խոչընդոտներ: Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրները եւս չեն խուսափել հետքրիստոնեական

հասարակության ախտանշաններից՝ ծնելիության անկում, գեղոնիստական մշակույթի տարածում: «Նոր Եվրոպայի» գրեթե բոլոր երկրները, ինչպես Բուլղարիան, Ռումինիան, Ուկրաինան, առաջիկա քսան տարում ունենալու են ծնելիության կորուստներ, միեւնույն ժամանակ, նրանց բնակչության զգալի մասը ներգաղթելու է Արեւմտյան Եվրոպայի երկրներ: Թեպետ, չպետք է նորանալ, որ «նոր Եվրոպացիները», սկսած 1989-ից, ապրում են ազգային ինքնության զարթոնք, որի էներգիան դեռ բավական երկար ժամանակ չի մարի, իսկ, ասենք, միասեռական ամուսնությունները Լեհաստանում կամ Վրաստանում՝ պատկերացնել այսօր չի ստացվում:

Փաստորեն, մենք կարող ենք ականատես դառնալ Եվրոպայի՝ որպես գիտակցված մշակութային, պատմական, կրոնական համրության, նոր վերածննդին:

Մի բան կարելի է հաստատ պնդել. իհսուն տարի անց մենք գործ ենք ունենալու իսկապես նոր Եվրոպայի հետ: Յարցն այն է, թե ովքեր են առաջնորդելու այդ «նոր» Եվրոպան՝ Յյուսիսային Աֆրիկայից, Մերձավոր Արեւելքից, Յարավային Ասիայից եկածնե՞րը, թե՝ Կենտրոնական, Արեւելյան եւ Յարավարեւելյան Եվրոպայի ժողովուրդները: Գլխավոր իրադարձությունները դեռ առջեւում են:

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ *Արաքս Փաշայան*

2006թ. դեկտեմբերի 8-9-ը Մեքքայում սառւղական Արդալահ բին Արդ ալ-Ազիզ թագավորի նախաձեռնությամբ տեղի ունեցավ իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնի՝ Խալամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) երրորդ արտահերթ գագաթողովը: Նշենք, որ գագաթաժողովը կազմակերպության բարձրագույն մարմինն է, որը, ԻԿԿ կանոնադրության համաձայն, գումարվում է երեք տարին մեկ անգամ, անդամ պետություններից որեւէ մեկում, միջազգային հարաբերությունների համատեքստում քննարկելու խալամական աշխարհին մտահոգող խնդիրները: Եթե խալամական շրջանակներում առաջանում է որեւէ հրատապ հարցի քննարկման անհրաժեշտություն, ապա հրավիրվում է արտահերթ գագաթաժողով:

Մեքքայի գագաթաժողովի խորագիրը՝ «21-րդ դարի մարտահրաբերներին ընդառաջ համերաշխությունը՝ գործադրման մեջ», կանխորոշեց քննարկվող հարցերի սահմանները: ճիշտ է, գագաթաժողովում առաջադրված էր հարցերի լայն շրջանակ, սակայն հիմնական ուշադրությունը սեւովեց երկու կարեւորագույն խնդիրների՝ պաղեստինյան հարցի եւ 21-րդ դարում խալամական աշխարհին սպառնացող մարտահրաբերների վրա:

Այսօր, ավելի քան երբեւէ, խալամական հանրությանը մտահոգում է 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո աշխարհում խալամի եւ խալամական քաղաքակրթության նկատմամբ խորացող անհանդուրժողականությունը: Ստեղծված պայմաններում խալամական աշխարհը հայտ է ներկայացնում՝ պայքարելու խալամաֆորիայի դեմ, որը, ինչպես նշված է փաստաթղթում, ռասիզմի եւ խսդականության արտահայտություն է:

Մեքքայի գագաթաժողովում խալամական աշխարհի առաջնորդները հայտարարեցին, թե խալամը չափավոր կրոն է, որը մերժում է ծայրահեղականությունն ու նոլեռանդությունը: Մեքքայի հանդիպումը լուրջ փորձ արեց՝ վերջ դնելու հատկապես Արեւմուտքից եկող այն դիրքորոշմանը, որը, ինչպես նշում են մահմեդական աշխարհի գործիչները, հիմնված է խալամի նկատմամբ կեղծ պատկերացումների եւ մեկնաբանությունների

Վրա: Հակախլամական քարոզության մեջ բացասական դեր են խաղացել միջազգային զանգվածային լրատվամիջոցները, ուստի իսլամի մասին ճշմարիտ պատկերը վերականգնելու համար առաջարկվեց իհմնել միջազգային իսլամական լրատվացանց:

Հանդիպմանն ընդունված փաստաթղում մասնավորապես նշված է. «...իսլամական քաղաքակրթությունը մարդկային քաղաքակրթության մի ամբողջական հատված է, որ իհմնված է երկխոսության, չափավորության, արդարության... եւ հանդուրժողականության իդեալների վրա, որոնք մարդկային վեհ արժեքներ են»:

Ըստ այդմ՝ դատապարտելի են իսլամն ահարեկչության հետ նույնացնելու փորձերը, ինչպես նաև այն մահմեդականների արարքները, ովքեր ձգտում են ահարեկչական գործողությունները իհմնավորել իսլամի անունով, սադրում կամ էլ ֆինանսավորում են ահարեկչությունը: Այս համատեքստում գագաթաժողովը իսլամական աշխարհին կոչ է անում պայքարել կեղծ կրոնականության եւ աղանդավորական ծայրահեղականության դեմ, չենթարկվել այն գործիչների ֆերվաներին, ովքեր լիազորված չեն դրանք իրապարակելու:

Նշվում է, թե ահարեկչությունը սխալ է վերագրել որեւէ կոնկրետ կրոնի, ռասայի կամ երկրի եւ որեւէ կերպ արդարացնել այն: Իսլամական կոնֆերանսը, ինչպես նիշտ, անհրաժեշտ է համարում տարբերակում նտցնել ահարեկչության եւ ազատագրական պայքարի միջեւ, վեր հանել ահարեկչությանը նպաստող պատճառները:

Իսլամական առաջնորդների համոզմանք՝ աշխարհում խաղաղության կարելի է հասնել փոխադարձ հարգանքի, փոխհամաձայնության եւ ժողովուրդների հավասարության վրա իհմնված քաղաքակրթական երկխոսությունների միջոցով:

Իսլամական աշխարհի ամենահեղինակավոր ֆորումը կոչ է անում մահմեդականներին՝ չանցրպետվել աշխարհի մնացյալ հատվածից, այլ ներդաշնակ քայլել աշխարհի գիտատեխնիկական նվաճումների հետ, գործել չափավորության եւ հանդուրժողականության սահմաններում:

Մեքքայի գագաթաժողովը վերատիմ արձանագրեց այն իրողությունը, որ իսլամական ումնան հայտնվել է աղքատության, տնտեսական հետամնացության, հիվանդությունների, տգիտության, տարանջատման, օտար ազդեցությունների, մոլորեցնող արժեքների եւ խառնաշփոր իրողությունների ծիրում, ինչը կարելի է հաղթահարել միայն իսլամի իհմնարար արժեքները վերականգնելով ու դավանելով:

Մահմեդական երկրների ղեկավարների հանդիպմանն ընդունված

փաստաթղթում նշված է, թե իսլամական պետությունները պետք է հետամուտ լինեն ժամանակակից կառավարմանը, քաղաքացիական ինստիտուտների ձևավորմանը, ժողովրդավարության ամրապնդմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, պայքարեն կոռուպցիայի եւ հասարակության մեջ արատավոր երեւույթների դեմ:

Առաջարկվեց ստեղծել մարդու իրավունքների մշտական գործող իսլամական ինստիտուտ, որը պետք է ուսումնասիրի ԻԿԿ անդամ պետություններում մարդու իրավունքներին առնչվող հիմնահարցերը:

Վերջին շրջանում Իսլամական կոնֆերանսը կարեւորում է կազմակերպության ներսում բարենորոգումների անհրաժշտությունը, ինչը պետք է վերանայի նրա նպատակները, կառուցվածքն ու գործունեությունը: Ըստ այդմ արդիականացված կազմակերպությունը պետք է համապատասխանի 21-րդ դարի պահանջներին: Նախատեսվում է ԻԿԿ քարտուղարության շրջանակներում հիմնել «ուղեղային կենտրոն»:

Չնայած Իսլամական կոնֆերանսը հաճախ է քննադատության ենթարկվում սեփական որոշումները գործադրելու անկարողության եւ անսկզբունքայնության պատճառով, սակայն փաստ է, որ կազմակերպությունը հայտ է ներկայացնում՝ մշակելու 21-րդ դարում իսլամի գլոբալ ռազմավարությունը, ինչպես նաև՝ միասնական իսլամական քաղաքականության եւ մարտավարության սկզբունքները:

Փաստորեն, առաջիկայում նույնպես միջիսլամական հարաբերությունների առանցքը կշարունակի մնալ էթնիկ, ռասայական եւ աշխարհագրական պատկանելությունը ժխտող հանրության՝ իսլամական ազգի գաղափարը, իսկ իսլամը կշարունակի հանդես գալ որպես իսլամական աշխարհի զարգացման ուղղություն, մահմեդական երկրների եւ ժողովուրդների միջեւ համագործակցության եւ առաջընթացի կարեւոր նախապայման:

Ուշագրավ է, որ Մեքքայի գագաթողովն ընդունեց «Միացյալ իսլամական գործողության» տասը տարվա ծրագիր, ինչը նախատեսում է մեծացնել իսլամական պետությունների միջեւ առեւտրի ծավալները: Ծրագիրը նախատեսում է պայքարել կրոնական ծայրահեղականության դեմ, ինչը մահմեդական գործիչներից շատերի հանողմամբ՝ հանգեցրեց ճգնաժամի: ԻԿԿ գլխավոր քարտուղար Իհսանօղլուի համոզմամբ՝ չափավորությունը կօգնի պայքարել ծայրահեղականության դեմ, իսկ արդիականությունը՝ հետամնացության:

Ակնհայտ է, որ ԻԿԿ մոտեցումներում եւ հարցադրումներում նոր շեշտադրումներ կան: Այսօր, իսլամական աշխարհի նկատմամբ առկա

լարվածության պայմաններում՝ ԻԿԿ-ն ձգտում է ապացուցել, որ իսլամական աշխարհն անջրաբետված չէ մնացյալ աշխարհից, իսկ մահմեդականներին առնչվող ամենասուր հակամարտություններն անգամ կոչ է անում լուծել խաղաղ ճանապարհով:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության վերջին շրջանի գործունեությունը գալիս է իիմնավորելու արեւնտյան քաղաքագիտության կողմից համեմատաբար վերջերս շրջանառության մեջ դրված «հետիսլամիզմի» տեսությունը, համաձայն որի 21-րդ դար իսլամական աշխարհը մուտք կգործի՝ զարկ տալով արդիականացմանը, իսլամական ժողովրդավարությանն ու ազատականացմանը. հասարակական գիտակցության մեջ որոշակիորեն կհաղթահարվեն առկա անհանդուրժողականությունն ու կրօնական մոլեռանդությունը:

## **Բ ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Դավիթ Հովհաննիսյան**

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐԸ ..... 1**

**Սարգիս Հարությունյան**

**ԱԴՐԵՋԱՆԸ ՊԵՏԱԳՈՆԻ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ**

**ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐՈՒՄ ..... 6**

**Սեւակ Սարուխանյան**

**ԻՐԱՆ. ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ**

**ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐԶ ..... 10**

**Գագիկ Տեր-Հարությունյան**

**ՈՈՒՄԱԿԱՆ ԳԱԶ.**

**ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 15**

**Հայկ Դեմոյան**

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ**

**ԿԱՐՍ-ԱԽԱԼՔԱԼԱՔ-ԹԲԻԼԻՍԻ-ԲԱՔՈՒ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ..... 20**

**Արտակ Շաքարյան**

**ԹՈՒՐՔԻԱ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ ..... 26**

**Սուրեն Սարյան**

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ..... 31**

**Արաքս Փաշայան**

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ**

**ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ ..... 37**

*Շապիկի վրա պատկերված է  
Կանա լիճը (Աղքամարի կղզուց)*

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Դեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթ՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ O1U 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: